

Բ. ՈՒՆՈՒՐԱԲԱՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԶՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի լեզու արտացոլում է տվյալ ժողովրդի կյանքի ու պատմության կարևորագույն երևույթները: Եվ դժվար է լիովին հասկանալ մի ժողովրդի պատմությունը, առանց նրա լեզվի (ինչպես նաև մշակութային մյուս երևույթների) զարգացման փուլերն ուսումնասիրելու:

Եթե լեզուն ազգի պատմության կենդանի վկայությունն է, ապա բարբառն էլ ճիշտ այդպիսի նշանակություն ունի ազգի այն հատվածի համար, որը խոսում է այդ բարբառով: Հաճախ բարբառը դրսևորում է ամբողջ ազգի և մասնավորապես այդ բարբառով խոսող հատվածի պատմական ձևակառուցողի մակերևացություններն ու տեղատվությունները:

Լեզվաբանները հայոց բարբառներից կամ հին խոսքով ասած՝ եզերական լեզուներից ամենամեծն են համարում Արցախի բարբառը: Նրա «սահմանները կը փոփոխ հյուսիսեն մինչև Կովկասի վերջին ծայրերը, հարավեն մինչև Թավրիզ, արևելքեն մինչև Կասպից ծովին եզերքները, արևմուտքեն Սևանա լիճը և Սրևանի ու Կարնո բարբառներուն սահմանագիծը»¹: Այս սահմանները գծելուց հետո մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը նշում է, որ Ղարաբաղի բարբառն արտագնաց զանգվածների հետ հորդել է նաև հիշյալ սահմաններից դուրս, տարածվել Փոքր-ասիական Զմյուռնիայի և Այտրնի մոտերքի հայկական գաղթավայրերում, Միջին-ասիական հանրապետություններում, Ռուսաստանում և այլուր: Աճառյանի վկայությամբ՝ Փոքր Ասիայի Պուրտուր և Էոտեմիշ վայրերում այն ժամանակ զեռևս պահպանվում էր այդ բարբառը՝ այնտեղ ապրող հին զարաբաղցիների շուրթերին:

Ըստ Հր. Աճառյանի՝ Ղարաբաղի խոսվածքը ևս պատկանում է Ղարաբաղի բարբառին: Վերջինիս շատ մոտիկ է նաև այն ենթաբարբառը, որով խոսում են «Թավրիզի մոտիկ Մուժումբար գյուղը և Թավրիզի Լիլանա թաղին հայությունը, որ ձևացած է Ղարաբաղի և Մուժումբարի հայ գաղթականներեն»²: Այս վայրերի բնակիչները, ինչպես ճիշտ նկատում է Հր. Աճառյանը, Մեծ Հայքի Փայտակարան գավառի հայության բեկորներն են և հարյուրամյակների ընթացքում չեն կորցրել իրենց ավանդական մայրենի լեզուն:

Հայ բարբառների մյուս հմուտ գիտակը՝ Արարատ Ղարիբջանը, լեզվաբանական քննությամբ ցույց է տալիս, որ արցախ-ղարաբաղյան բարբառին է պատկանում նաև Զանգեզուրի ենթաբարբառը³, որը տարածված է հին Սյունյաց աշխարհում (Մեծ Սյունիք): Պրոֆ. Ղարիբջանն էլ իր հերթին մի ընդարձակ քարտեզ է գծում արցախական բարբառի տիրույթնության սահմանները

1 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն (սեմինան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա—Նոր-Նախիջևան), 1911, էջ 61:

2 Անդ, էջ 61:

3 Ար. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 232—233:

ցույց տալու համար. «Ղարաբաղի բարբառը մեր կենդանի բարբառներից ամենամեծն է... Այդ բարբառով խոսում են Ղարաբաղի բնակչությունը և բոլոր այն ղարաբաղցիները, որ գտնվում են Թաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում և Տաջիկստանում, նաև Ջանգեզուրի և Կապանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Ղաղախի, Շամշադինի, Դիլիջանի շրջանների բնակչությունը»⁴։

Պետք է ուշադրության առնել. եթե հին ու նոր գաղթավայրերը հանենք, ապա Արցախ-ղարաբաղյան բարբառի տարածման սահմանների մեջ կմնան Սեծ Սյունիքը, Արցախը (Փոքր Սյունիքը), Փայտակարանը և Ուտիքը (Կիրովաբադն ու շրջակա հայաբնակ վայրերը), այսինքն՝ Հայոց Աղվանքը, հայկական էթնիկական մի անտրոհելի սամոզջություն, որի զգալի մասը չնայած շորրոզի դարի վերջից՝ երբևից կտրվում էր աղգային մայր միջավայրից, անսրբապնդում աշխարհագրական-քաղաքական հաղար ու մի արգելափակով, սակայն չէր կորցնում իր հայկական ընդհանուր նկարագիրը։

Իսկապես ուշադրավ երևույթ է. ի հեճուկս դաժան ճակատագրի, ընդդեմ սսիմիլյատոր մեծ ու փոքր բաղմաթիվ բռնազրավիչների՝ բարբառը դիմագրավել է դարեր և անգրավ ու անխաթար պահել իր հնամենի աշխարհագրությունը։

Արցախ-ղարաբաղյան բարբառը նշանավոր է ո՛չ միայն ընդգրկած բնակչության քանակով, այլև որ հայ ամենահարուստ, ամենամեծ ու ամենակենսունակ բարբառներից մեկն է։

Հր. Աճառյանը ղարաբաղցիներին, ավելի ճիշտ՝ Ղարաբաղի բարբառով խոսողներին համարում է «շատ աճուն խիստ վաճառական, ճարպիկ, բնդունակ և ձեռներեց ոգիի տեր մի ժողովուրդ»⁵։ Նրանք հեշտությամբ տիրապետում են օտար լեզուների, սակայն երբեք չեն մոռանում իրենց մայրենի բարբառը, նրանով խոսելը համարելով մի սրբազան պարտականություն։ Եվ այս պատճառով է, որ այդ բարբառը պահպանվել է ոչ միայն բնաշխարհում, այլև ամենուր, որտեղ ոտք են դրել և իրենց օջախների ծուխն են երկինք հանել նրանով խոսող ընտանիքները. ձգմարտությունն այն է, որ ո՛չ միայն խոսողն է պահել բարբառը, այլև բարբառն է պահել խոսողին։

Սակայն, որքան էլ տարօրինակ լինի, մինչև օրս այդ բարբառը բաղմակողմանի քննության չի ենթարկվել։ Նրա հարևանցի քննության առաջին փորձը կատարել է Ք. Պատկանյանը՝ հայ բարբառների ուսումնասիրությանը նվիրված իր գրքում⁶։ Ապա Հր. Աճառյանն է գրել Ղարաբաղի բարբառի առաջին լուրջ ուսումնասիրությունը⁷։ Այս գրքի վրա, ինչպես ինքն է վկայում, «հայույն Մելյե հրատարակեց ընդարձակ մատենախոսական մը... ուր ի վեր կրանէ Ղարաբաղի բարբառին ցույց տված բոլոր հետաքրքիր և ընդհանուր ձայնաբանութեան համար կարևոր կետերը»⁸։

Աճառյանի հաջորդ գործը, որ հայոց բարբառների ընդհանուր համակարգի

⁴ Անդ. էջ 230։

⁵ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 61։

⁶ К. Патканов, Исследования о диалектах армянского языка, СПб., 1869.

⁷ Հր. Աճառյան, Ուսումնասիրություններ հայկական բարբառագիտության, Գ., Թնութիւն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901 (արտատպված «Արարատ»-ի 1899—1901 թթ. համարներից)։

⁸ Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 71։

մեջ քննում է նաև Ղարաբաղի բարբառի վիճակը, վերը նշված «Հայ բարբառագիտություն» մեծարժեք ուսումնասիրությունն է:

Այնուհետև Ղարաբաղի բարբառն իր արժանի տեղն է գրավում Ար. Ղարիբյանի ստեղծագործություններում⁹, որոնցում հեղինակը այս բարբառն ուսումնասիրում է ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ, հայտնաբերում նրա ներքին առանձնահատկությունները, նշում ենթարարբառները, սրանց փոխհարաբերություններն ու օրինաչափությունները¹⁰:

Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության գործում հետաքրքրություն է ներկայացնում բանասիրական գիտ. թեկնածու Կ. Դավթյանի գիրքը¹¹, որը բարբառի հնչյունաբանական ու ձևաբանական բարեխիղճ քննությունն է հանդիսանում և միաժամանակ գծում է նրա ենթարարբառների ու խոսվածքների քարտեզը:

Դժբախտաբար, այսօրանով դեռևս չեն լուծվել Արցախ-ղարաբաղյան բարբառի հետ կապված պրոբլեմները, քանի որ մինչև օրս էլ ոչ ոք չի դրադվել նրա պատմությանը: Հրապարակի վրա չկա շատ թե քիչ լուրջ մի գործ, որը յուրյց տար, թե որտեղից է գալիս և ուր է գնում այսօրվա հայության համարյա մեկ-քառորդի ամենօրյա խոսակցական լեզուն:

Այս վերջին տխուր հանգամանքն էլ հնարավոր է դարձրել, որ ասպարեզ ելնեն պատմա-բանասիրական գիտական կարողությունից ու բարեխղճությունից դուրկ, գիտության հետ ոչ մի կապ չունեցող մարդիկ և մարդանքներ անեն Արցախ-ղարաբաղյան բարբառի պատմության բաց հրապարակում:

Այսօրինակ գործիչներից մեկն էր Տ. Տեր-Գրիգորյանը, որը դեռ 1939 թ. հրապարակ հանեց Արցախ-Ղարաբաղի բարբառի ծագման իր «տեսությունը», իրանով իսկ հիմք դնելով իրավարտչական մի ամբողջ հոսանքի, որի նպատակն էր խեղաթյուրել Ղարաբաղի, ինչպես նաև Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմի մեջ մտնող հայկական մյուս շրջանների բնիկ հայության պատմությունը:

Ո՞րն է Տեր-Գրիգորյանի «հայտնությունը». «Գերազանցապես եկեղեցու և հոգևորականության միջոցով Հայաստանն իրականացրեց իր քաղաքական ու կուլտուրական սպեցիալությունը Ղարաբաղի (ուղում է ասել՝ Արցախի—Ու. Բ.) վրա, և միայն հետագայում Հայաստանից արտաքսվածներն սկսեցին Ղարաբաղ մուծել հայոց լեզուն, որը տեղական զարգացման և զարգարա-հաբեթական լեզվի հետ միախառնվելու շնորհիվ վերջին հաշվով տվեց ժամանակակից դարարաղյան բարբառը, որով խոսում է ԼՂԻՄ-ի բնակչությունը»¹²: Տ. Տեր-Գրի-

⁹ Ար. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ (Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. 11-րդ, 1939): Նրա՝ Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

¹⁰ Պրոֆ. Ղարիբյանը Ղարաբաղի բարբառի Հաղրութի խոսվածքի քննությամբ եկել է այն եզրակացության, որ այն չի մտնում Ղարաբաղի բարբառի ընդհանուր հյուսվածքի մեջ, այլ ներկայացուցիչն է հայ բարբառների ռու ճյուղի: Մեր խնդրից դուրս է այս հարցի քննությունը. սակայն չենք կարող չնշել, որ Հաղրութի խոսվածքի դոնե այժմյան վիճակը նման եզրակացության համար հիմք չի տալիս, որովհետև նրա և ամբողջ Ղարաբաղյան բարբառի միակ տարբերությունն այն է, որ Հաղրութի խոսվածքի անկատար դերայը մի՛շտ է ավարտվում ռու մասնիկով, իսկ բարբառում՝ մասամբ: Օրինակ, Հաղրութի խոսվածքում՝ կյրբիս րմ (զրում եմ), Ղարաբաղի բարբառում՝ կյրբում րմ, բայց նաև՝ կյրբիլիս րմ...

Հաղրութի խոսվածքն առանձին բարբառ է համարում նաև լեզվաբան Ա. Պողոսյանը (տե՛ս նրա «Հաղրութի բարբառի քննությունը»):

¹¹ Կ. Դավթյան, Հեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

¹² Т. И. Тер-Григорян, Нагорно-Карабахская автономная область («Известия Аз. филиала АН СССР, 1939, № 1), стр. 14--15.

գործանքն անմիջապես ճշգրտում է «միայն հետագայում»-ը և, խոսելով արաբական տիրապետության ժամանակների մասին (650—850 թթ.), ասում է. Արցախում «հաճախ էր թաքնվում Հայաստանի բնակչության մի մասը, որն այստեղ նստում էր և ավելի ու ավելի էր հայոց լեզուն ներմուծում Արցախ»¹³:

Այս մի ականարկը ճշգրտելուց առաջ նա արդեն մատնել էր և իր նպատակը՝ Արցախի բարբառը «գարգարա-հաբեթական լեզվի» վրա պատվաստելուց հետո նշելով, որ «աղբբեջանական լեզուն ևս զարգացել է այդ նույն հաբեթական հիմքի վրա»¹⁴:

Ուրեմն, Տ. Տեր-Գրիգորյանից իմացանք, որ ինչպես Արցախ-Ղարաբաղի բարբառը, այնպես էլ աղբբեջանական լեզուն գոյացել և զարգացել են միևնույն հաբեթական (տվյալ դեպքում՝ գարգարեբենի) հիմքի վրա:

Եթե մի քիչ ավելի պարզեցնելու լինենք Տ. Տեր-Գրիգորյանի միտքը, կստացվի այսպես. արաբական տիրապետության ժամանակ Հայաստանից արտաքսված (սլո!) բնակչության մի մասը փախավ, ապաստանեց Արցախում, և այստեղի գարգար բնակչությունն էլ, երևի կարեկցանքից զրդված, վերցրեց ու հայացավ:

Ընդունելով մի քիչ ավելի գոհակացված արտահայտված են ումն Ա. Ս. Վարտապետովի այն «աշխատություններում», որոնք խնամքով պահվում են Աղբբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում¹⁵: Վարտապետովը պնդում է, որ հայ եկեղեցին «խաշի զրոշով իր ճանապարհից ջնջել է ժողովուրդներին պատմական Աղվանքի, որի մի մասն է հանդիսանում Ղարաբաղը (Արցախը)»¹⁶, և այս ճանապարհով էլ ստեղծվել է Արցախի բարբառը:

Նրանք, ում համար թիված են այս մերկապարանոց հայտարարությունները, տեղն ու տեղն էլ օգտագործում են, հորինելով Արցախի բարբառի առաջացման մի այսպիսի առասպել. «Քրիստոնեական եկեղեցու զորեղ ազդեցությունը հատկապես նկատվում է Արցախում: Հնուց ի վեր աղվանական ցեղերով բնակեցված այս մարզի վրա մեր թվարկության սկզբին ժամանակ առ ժամանակ իրենց տիրապետությունն էին տարածում հայ թագավորները, որոնք վարում էին տեղական բնակչությունը հայացնելու քաղաքականություն: Սակայն Արցախի աղվանականությունն անկախության էր ձգտում, և Հայկական թագավորության ռազմա-քաղաքական հզորության թուլացմամբ մարզում վերականգնվեց աղվանական թագավորների իշխանությունը: Այնուհանդերձ, Արցախում, զլավորապես նրա լեռնային մասում, ուժեղացավ հայոց լեզվի ազդեցությունը՝ կապված հայերի այստեղ ներհոսելու հետ: Աստիճանաբար տեղի ունեցավ հայոց լեզվի և տեղական լեզուների միախառնումը, որի հետևանքով էլ ժամանակի ընթացքում տիրապետեց առաջինը, և կազմվեց ժամանակակից հայոց լեզվի դարաբաղյան բարբառը»¹⁷:

Արցախի հայության պատմության հանրահայտ փաստերն աղավաղելիս՝ հայ գրչականներին օգտագործելու հետաքրքիր մեթոդ է կիրառում պատմաբան Զ. Բունիաթովը: Նա փնտրում է հայ պատմաբանների՝ տարբեր ժամանակներ-

¹³ Անդ, էջ 17:

¹⁴ Անդ, էջ 15:

¹⁵ Տե՛ս 3. Бунятов, Азербайджан в VII—XI вв., стр. 349.

¹⁶ Անդ, էջ 101:

¹⁷ «Азербайжан тарихи», I Կ., Баку, 1958, с. 93.

րում թույլ տված առանձին սխալները, սրանք խառնում Տեր-Գրիգորյանի ու Վարտապետովի վրպարտություններին, ստեղծելով նորանոր մոլորություններ, բունիաթովն այսպես է վարվում, օրինակ, ակադ. Ս. Տ. Երեմյանի դրածների հետ՝ յուրովի մեկնաբանելով նաև դրանք¹⁸։

Ինչպես Աս. Մնացականյանն ու Պարույր Սևակն են ճիշտ նկատել, Բունիաթովը փորձում է հայ «ամբողջ ժողովրդին վրկել իր ավգությունից, նրան հայտարարելով «հայացված ազլաններ»։ Ստացվում է, որ Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի շատ շրջանների հայ բնակչությունն իսկական հայկական չէ»¹⁹։

Աս. Մնացականյանն ու Պ. Սևակը համոզիչ փաստերով ցույց են տալիս, որ Բունիաթովի գիրքը ծնունդ է վատառողջ տրամադրությունների և ոչ մի առնչություն չունի առհասարակ գիտության ու մասնավորապես մարքս-լենինյան գիտության հետ։

Նրանք չեն անդրադառնում կամ համարյա չեն անդրադառնում «բունիաթովշչինային» սնունդ տվող գիտնականների՝ բազմիցս հրապարակած այն պնդումին, թե հայերն ասիմիլյացիայի են ենթարկել «ազլանական» Արցախի և հարևան հայաբնակ, բայց դարձյալ նախկինում ազլան բնակչությանը։

Իսկ այստեղ, քանի խոսքը վերաբերում է Արցախի հայության լեզվի պատմությանը, մենք չենք կարող շխտսել այդ մասին, մանավանդ, որ այդ կարծիքը հրապարակվել է նաև համամիութենական մամուլում, Արցախի և շրջակա հայկական գավառների պատմությունն ազգավազված պատկերացնելու հնարավորություն տալով ոչ միայն բունիաթովներին, այլև ռուս և այլազգի այն գիտնականներին, որոնք հայկական սկզբնաղբյուրներից օգտվել չեն կարողանում։ Սրանք հայկական աղբյուրների հավարական եզրակացություն են համարում նման հայտարարությունները, հավատում նրանց և իրենք էլ իրենց հերթին են տարածում։

* * *

Աղբյուրներն Արցախի նախահայկական բնակչության կազմի մասին համարյա ոչինչ չեն ասում։ Սակայն պատմաբաններն, ըստ երևույթին, աշխատում են այս բացը լրացնել։ Որոշ մասնագետներ Արցախում հնուց ի վեր տեսնում են ազլանական ցեղեր²⁰։ Ոմանք էլ հենվելով պատմական ավանդությունների վրա, իրենք են նոր «ավանդություններ» հորինում և Արցախում տեղադրում դարդարներին, ուտիներին և այլ ցեղերի²¹։

Գարդարներին Արցախի և ալժմյան լեռնային Ղարաբաղի բնակիչներ դարձնելու մոլորությունն, ըստ երևույթին, սկսվել է Մակար Բարխուտարյան-

¹⁸ С. Т. Еремян, Идеология и культура Албании (Очерки истории СССР III—IX вв., Москва, 1958), стр. 328.

Ս. Տ. Երեմյանի՝ Արցախի և հարևան հայկական գավառների հայացման մասին ստեղծած տեսությունը կանգնադառնալիք չէ։

¹⁹ Ас. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Бунятова «Азербайджан в VII—IX вв. (Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1), էջ 190.

²⁰ «Азәрбайҹан тарихи», с. 93.

²¹ Մ. Բարխուտարյան, Պատմության Աղուանից, Վաղարշապատ, 1902, էջ 11—30։

ցից, որը խորենացու «Գարգարացոց դաշտը» տեղադրել է Մուղանի արևմտյան մասում կամ Ղարաբաղյան դաշտում, դրա համար հիմք դարձնելով Կարկառ գետի անունը, որը, իբր, մնացել է դարդարներից: Այս առթիվ նա գրել է. «Հետքերից ակներև է, որ Գարգարացվոց նահապետն, Սիսակյան ցեղից հատվածելով Մեծ-Սյունիքից Գարգարացվոց դաշտն իջնելու ժամանակ, բավական ժամանակ մնացած է Գարգար գետի վերնամասերում, ըստ որում մինչև ցայսօր Գարգար է կոչվում այդ տոհմի անվամբ գետն ակունքներից մինչև Կուր գետի խառնվիլն²², նույնպես և դաշտն... Կարևոր է հայտնել, որ դաշտիս ստորին մասն հայ պատմիչներից կոչված է Մուղան. Գարգարացվոց բնակության տեղն՝ Գարգարացվոց դաշտ»²³:

Հետազայում Գարգար գետի, Գարգարացոց դաշտի և գարգարների արցախյան բնակավայրերի մասին խոսող գիտնականները²⁴ (նույնիսկ Անդրկովկասի պատմական աշխարհագրության հմուտ մասնագետ ակադ. Ս. Երեմյանը, տե՛ս նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատությունը)²⁵ կրկնել են ու տարածել այս սխալը:

Սակայն, եթե Մ. Բարխուտարյանցի սխալն անմեղ ու անշահ մի բան է, նրան կրկնողներից շատերը (հատկապես Զ. Յամպոլսկին, ապա Զ. Բունիաթովը) գարգարներին և ուտիներին Արցախում նստեցնելուց հետո էլ նրանց կնքում են աղվաններ, աղվաններին՝ հին ագրբեջանցիներ. Եվ ստացվում է այնպես, որ Արցախը հենց այն գլխից հին ագրբեջանական մարզ է եղել: Սրանից հետո էլ սկսում են հորինել պատմություններ այն մասին, որ, իբր, արաբական տիրապետության ժամանակ Հայաստանից արտաքսված հայերը թափանցել են Արցախ և ասիմիլյացիայի ենթարկել տեղի բնակիչ աղվանական ցեղերին:

Մ. Բարխուտարյանցն, ինչպես ասացինք, իր սխալների շարքն սկսել է Կարկառ գետը Գարգար դարձնելուց:

Կարկառ գետը հոսում է Արցախի Վարանդա գավառով, այժմ՝ ակունքներում Շուշվա շրջանն է, ստորին ավազանի մասը՝ Ստեփանակերտի շրջանը: Այն երբեք Գարգար չի կոչվել ո՛չ պատմական աղբյուրներում և ո՛չ էլ արցախցիների լեզվում: Հին ու նոր արցախցիներն իրենց գետը հիշում են որպես Կարկառ, որ հայերեն բառ է և նշանակում է քարքարոտ: Կարկառ գետի անունը հենց այդպես էլ բացատրում էր հայտնի կովկասագետ Կ. Գանը²⁶, Ճիշտ

²² Կարկառը ցամաքում է՝ Կարլն չհասած:

²³ Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղուանից, էջ 18:

²⁴ Լեո. Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Քիֆլիս, 1914, էջ 22—23:

²⁵ Հյուրշման, Հին հայոց տեղւոյ անունները, Թարգմ. Հ. Բ. Պիլեպիկճեան, Վիեննա, 1907, էջ 111—112:

Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 424.

К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании, М.-Л., 1959, стр. 48.

²⁶ Ճիշտ գրքում գիտնականը Կարկառ գետը, որ սկիզբ է առնում Քիրս լեռնաշարի Զառիստ դաղաթի մոտ, դարձնում է Գարգար և բխեցնում Դիդափայտից (տե՛ս վերոհիշյալ գրքի էջ 46-ը), որը ոչ մի կապ չունի Կարկառի ակունքների հետ:

²⁶ К. Ган, Опыт объяснения Кавказских географических названий, Тифлис, 1909, стр. 36.

այդպես էր հասկանում ու բացատրում նաև Հ. Հյուբշմանը. «Կարկառ տեղի (յկրդաի)... կարկառ «քարակույտ»²⁷: Հյուբշմանն այստեղ մատնանշում է Կ. Գանձակեցու վկայած ձևը՝ Կարկառ. «Եւ տարեալ առ հայրն իւր, մեծապատիւ արար և ետ ի նա զհայրենիս իւր զՋարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ աղգն թուրքաց և վրաց»²⁸:

Գանձակեցու վկայությունից պարզ երևում է, որ եղել է նաև Կարկառ քաղաք կամ տիրույթ, որը հավանաբար եղել է Կարկառ գետի ավազանում (իսկապես քարրարոտ վայր) և պատկանելիս է եղել հաշենի տեր Հասան-Ջալալյաններին:

Էնոն Կարկառ գավառանուն է հիշում Մոկուց աշխարհում²⁹:

Վարդան Բարձրբերդեցին էլ Կարկառ անունով տիրույթ է հիշում Կիլիկիայում³⁰, որ ըստ թարգմանչի (Ն. Էմին) ծանոթագրության՝ քաղաք-ամրոց է:

Ուրեմն, այսպիսի հատուկ անունը հայոց մոտ տարօրինակ բան չէր: Կարևորն այն է, որ այս անունն ունի պարզ իմաստ՝ հասկանալի միայն հայերեն:

Ինչ վերաբերում է Գարգարացոց դաշտին, ապա ոչ մի հիմք չկա այն Մուղանի վերնամասի անունը դարձնելու: Գարգարացոց դաշտի մասին միայն մեկ անգամ խոսում է Մ. Խորենացին և այն էլ հյուսիսական ցեղերի դեմ Տրդատի տված ճակատամարտի առիթով. «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօք իջեալ ի դաշտն Գարգարացոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի»³¹:

Ապա նկարագրում է ճակատամարտը, Տրդատի կատարած ջարդը և հետո. «Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զօրաւորն միջակտոր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնալին. զորոց զհետ մտեալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհն Հոնաց»³²:

Նախ, Տրդատը հյուսիսականների դեմ ճակատամարտ տալու համար ինչո՞ւ պիտի իջներ Մուղանի դաշտը, որն իր երկրի խորքում էր գտնվում: Հիշենք, որ այն ժամանակ Հայոց հյուսիսային սահմանը Կուրն էր, իսկ Մ. Երեմյանի և մյուսների ձանաչած Գարգարացոց դաշտը Կուրից բավականաչափ հարավ է ընկած:

Եվ ապա հյուսիսականներին Գարգարացոց դաշտում ջարդելուց հետո, Տրդատը նրանց հալածում է մինչև Հոների երկիրը: Եթե այս դաշտը Կուրից հարավ լիներ, ապա Խորենացին անպայման կհիշեր, որ Տրդատը գետն անցնելով է հալածում: Մինչդեռ այդպիսի բան չկա մատենագրի մոտ:

Եվ, վերջապես, ամենակարևորը. Գարգարացոց դաշտը միայն ու միայն կարող էր լինել այնտեղ, ուր դարդարներն ապրում էին կամ երբեք ապրել էին: Գարգարների բնակավայրերը Կուրից հարավ ցույց տվող պատմական և ոչ մի աղբյուր չկա: Այն միշտ հիշված է Կուրից հյուսիս և հստակապես Կովկասյան լեռների փեշերին:

27 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղւոյ անունները, էջ 362.

28 Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 359.

29 Էնոն, Հայոց պատմութիւն, հ. Ա, էջ 154.

30 Վարդան Բարձրբերդեցի, Պատմութիւն տիեզերական, 1861, Մոսկուա, էջ 155.

31 Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 230.

32 Անդ, էջ 231.

Հունա-հռոմեական բոլոր այն աղբյուրները, որոնք վարդարների անունը տալիս են, միաժամանակ և նրանց բնակության տեղն են համարում Կովկասյան լեռնաշղթայի հարավային և հյուսիսային փեշերը, արանցիների և ամազոնուհիների հարևանությամբ: Այդ է վկայում նաև Ստրաբոնը³³, Բայց Ստրաբոնից առաջ գեոևս Միտրոդոր Սկևսացին և Հիսիոկրատն էին վարդարների բնակավայր համարում Կովկասի հյուսիսային փեշերը, ամազոնուհիների երկրի մոտ³⁴:

Դիոնիսիոսի «Երկրագնդի նկարագրություն» գրքի ծանոթագրություններում Փարգարը համարվում է Իգայի մի մասը՝ Կովկասյան լեռնաշղթայի վրա³⁵:

Խեսալոնիկացի արքեպիսկոպոս Եվստաֆիոսը «Իլիականի» ծանոթագրություններում վարդարցիների մասին կրկնում է Ստրաբոնի ասածը, այսինքն, որ վարդարներն ապրում են Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերին, ամազոնուհիների հարևանությամբ և սրանց հետ կենակցում են³⁶:

Հայկական աղբյուրներից միայն Աղաթանգեղոսի մոտ է, որ Փարգարացոց աշխարհ է տեղադրված Հայաստանում և այն էլ, ինչպես դիտնականներն են ճիշտ նկատել, սխալմամբ³⁷: Աղաթանգեղոսը Փարգարացոց բղեշխին մասնակից է դարձնում Գրիգոր լուսավորչի կողմից հայոց թագավորին ու իշխաններին բրիստոնեությանը օժելու արարողությանը³⁸, Մինչդեռ պատմությունից հայտնի է, որ Մեծ Հայքում եղել են չորս բղեշխներ (Անդեղտան, Մոփաց, Աղձնյաց, Գուգարաց), որոնցից և ոչ մեկը չի կոչվել Փարգարացոց: Պարզապես Գուգարացոց բղեշխի տոհմանունն աղավաղված է մատենագրի (կամ գրչի) կողմից:

Հայտնապես նման մի աղավաղում էլ հորենացու «Փարգարացոց իշխանությունն է». «Այս Սիսակի սերնդից էր և այս անվանի ու քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրավոր կուսակալ նշանակվեց: Ասում են, որ սրա զավակներից են սերվել ուտեացիների ազգը և վարդանիների, ծավղեացիների ու վարդարացիների իշխանությունները»³⁹:

Ըստ երևույթին՝ սա նույն «շատ անգամ շփոթված» «գուգարցիներ-վարդարցիներն» է: Ապա, վարդարցիների իշխանության՝ Առանի զավակներից սերելը բոլորովին էլ չի նշանակում վարդարների արցախցի կամ նույնիսկ մուղանցի լինելը, որպեսզի Մուղանն էլ դառնար Փարգարացոց զաշա:

Իսկ Թովմա Արծրունու վկայությունը, որ շփոթության մեջ է զցել Հյուրբշմանին և իր սխալի մեջ խորացրել ն. Աղոնցին, ոչ մի կերպ չի խոսում Փարգարացոց զաշա Պարտավի մոտ գնելու օգտին:

Թ. Արծրունին, նկարագրելով արարների պարտությունը ծանարներից (Կովկասյան լեռնաշղթայի վրա ապրող ժողովուրդ), ասում է. «Իսկ Թուխայի

³³ Ստրաբոն, XI, V, § 1:

³⁴ Անդ, Ստրաբոնի մեջբերմամբ, ինչպես նաև Ստեփան Բյուզանդացու հայտնի բառարանում (տե՛ս՝ Л а т ы ш е в, Известия древних писателей..., т. I, стр. 257), ինչպես նաև Բ. Շոպենի «Новые заметки...», էջ 184:

³⁵ Л а т ы ш е в, Известия..., т. I, стр. 210:

³⁶ Անդ, էջ 310:

³⁷ Հյուրբշման, Հին հայոց..., էջ 113:

³⁸ Աղաթանգեղայ պատմություն, էջ 462: Նույնը Աղաթանգեղոսից արտագրել է նաև Ուտանես Եպիսկոպոսը («Պատմություն հայոց», 1871, Վաղարշապատ, էջ 99):

³⁹ Մ. Խոբենացի, Հայոց պատմություն, գիրք Բ, սյ. 8:

տեղի վրա անհաշիվ զոհեր են տվել իրենց՝ իջանել ի դաշտն Գարգարացուց, և երթնալ մտանել ի քաղաքն մեծ Պարտաւ»⁴⁰։

Եթե Գարգարացւոց դաշտը պատկերացնենք Մուղանի տեղ, ապա Բուզա- չի դորքը ծանարներ ի երկրից Պարտաւի վրա արշաւանքի գնալիս երբեք չպետք է իջնէր աշնտեղ։ Ծանարները Կովկասյան լեռների վրա էին բնակւում, Ալանաց զուան մոտ⁴¹, ուրեմն Պարտաւից հյուսիս տրեմուք։ Իսկ Մուղանի դաշտը գտնւում է Պարտաւից արեւելք, ավելի ճիշտ՝ հարավ-արեւելք։ Հետեա- րար տրամաբանական է Գարգարացուց դաշտը փնտրել Ծանարների երկրից Գարտաւ տանող ճանապարհի վրա, որ կհամընկնի Գուգարացուց երկրի հետ եւս կամ կմնա թեկուզ և նրանից հարավ, սակայն ապահովապես անդրկուրյան տեղիտորիայում։

Դժվար թե Աղվանքի պատմության ամենաճանաչւած հեղինակ Մովսէս Կաղանկատւացին շիմանար այսանական կարեւորագույն ցեղ-գարգարների տեղը։ Կաղանկատւացին պատմում է, որ Մաշտոցը հայոց, վրաց և աղվան- ների համար դրեր ստեղծելուց հետո «Ձգէր դարոպութիւն անտարանին յաշ- խարհն Ուտիացուց, և յԱղուանս և ի Լիւինս և ի Կասպս և ի Դուռն Զորայ և յայլ աղգի աղգիսն, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնաց- ւոյ և նստուցեալ զմեծ լեռամբն Կովկասու. զԳարգառսն և զԿամիճիկ Հեփթաղան դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ աստուածապաշտութեան ուսուցանէր...»⁴²։

Ուրեմն, Աղվանքի պատմաբանն էլ գարգարներին բնակեցնում է Կով- կասյան լեռների փեշերին։

Հնարավոր է, որ Կովկասյան լեռնաշղթայի փեշերի բնակիչ գարգարներն իջած լինեն զեպի Կուրի ձախափը։ Հնարավոր է, որ այստեղ բնակութիւն հաս- տատածներին էլ հայկական աղբյուրները կոչած լինեն զուգարներ⁴³։

Հնարավոր է նաև, որ նրանք V դարի սկզբին արդեն տարածւած լինեին զեպի Կուրի ձախափնյա ծովամերձ մասերը, Ալբանիայի հին մայրաքաղաք Կապադակի շրջակայքում⁴⁴, որպէսզի Մաշտոցն էլ այնտեղ այդ նույն գարգար- ների համար զիր ստեղծելը։ Ըստ Կորյունի վկայութեան՝ Մաշտոցն այդ գրերն ստեղծել է Բյուզանդական Հայաստանում, և բանասեր ն. Ակինյանի բաւա- կանին համոզիչ քննութեամբ պարզւում է, որ այդ գրերը կարող էին ստեղծւած լինել ոչ թե աղվանների, այլ ալանների համար⁴⁵։

Սակայն որ գարգարները Կուրից հարավ իջած լինեն և հատկապես՝ որ նրանք բնակւած լինեն Արցախում, — այդպիսի վկայութիւն չի տալիս պատ- մական և ոչ մի աղբյուր։

Հետևապես. անհրաժեշտ է, որ պատմագիտական գրականութեան մեջ գո- նև այսուհետև գարգարները համարվեն իրենց զբաղեցրած վայրերի բնակիչ- ներ։ Ապա՝ որպէսզի Կարկառ զետր կոչվի միայն Կարկառ, Մուղանի դաշտը՝

40 Ի. Արծրունի, Պատմութիւն ի տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 290։

41 Տե՛ս Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 102, նաև՝ զրքի կից քարտեզը։

42 Մովսէսի Կաղանկատւացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 104։

43 Հ. Համբարյան, Գարգարացիք թե՛ զուգարացիք (Հանդես ամսօրեայ, 1910), էջ 241—242։

44 Հ. Հյուրշմանը Շաքի և Շիրվանի կողմերում է ենթադրում նրանց ետնադույն բնակավայրը (Հին հայոց տեղւոյ անունները, էջ 111—112)։

45 Տե՛ս նրա «Ս. Մաշտոց վարդապետ» գիրքը, Վիեննա, 1949, էջ 145—146։

Ռուդանի կամ Ղարաբաղի դաշտ։ Եվ, մանավանդ, որպեսզի աղվանական ցեղականաված զարգարները չհամարվեն Արցախի հայության նախնիներ, որովհետև դա այն մեղքն է, որով իրենց սխալ հայացքն են անցկացնում Արցախն Աղվանքի մեջ ներգրավողները։

Առնվազն թյուրիմացություն է նաև ուտիներին արցախցիների նախա-արեր համարելը։ Հայտնի է, թե ինչ հիմունքով են այսպես վարվում այն հեղինակները, որոնք հայտարարում են, թե X դարի հայ պատմագիր Հովհաննես Կաթողիկոսը վկայել է, որ ուտիները բնակվում էին Արցախ-Լեռնային Ղարաբաղում, ուր և իբր թե ենթարկվել են հայացման⁴⁶։ Մինչդեռ Հովհաննես Կաթողիկոսն իր պատմության մեջ ուտիացիներին Ուտիքից դուրս չի պատկերացնում, Ուտիքն էլ միշտ հիշում է Կուրի աջափնյա մասում։ Սակայն նրանց հայացման մասին մի բառ անգամ չի ասում, որովհետև Հովհաննես Կաթողիկոսի ընթերցողը կարիք չունեի հային հայ ներկայացնելու անհարկի տեղեկության։

* * *

Պատմական գիտությունն աչք է բացել ու Արցախը տեսել հայկական։ Եվ պատահական չէ, որ Արցախի նախահայկական շրջանի մասին չկա պատմական ոչ մի վկայություն։ Կատարյալ անտեղյակություն է տիրում հատկապես արցախաբնակ նախահայկական ցեղերի հարցում։

Պետք է ենթադրել, որ Արցախի հայության կազմավորմանը մասնակցել են հայկական, այսինքն՝ հայ ժողովուրդը կազմավորող ցեղեր։ Բայց նրանցից հատկապես ո՞ր ցեղերը։ Սա հարց է, որին պատասխանելը շատ է դժվար պատմական տեղեկությունների բացակայության և Արցախի տերիտորիայում մինչև հիմա կատարած պեղումների ու հնաբանական աշխատանքների խղճուկ վիճակի պայմաններում։

Մնում է միակ ելքը՝ դիմել տեղանուններին, որոնք երբեմն կարող են բացել պատմության խորագույն ծալքերը։

Հայ ժողովրդի կազմավորումից առաջ Արցախի տերիտորիայում ապրել են հաթերը, այն ցեղը, որն իր անունն է տվել կազմավորված ամբողջին (հաթ-հայ)⁴⁷։

Հաթերն Արցախի բնիկ ամենախոշոր ցեղն էին։ Նրանց անունից Հաթերը կամ Հայթերք է կոչվել Թարթառի հովտի ամբողջ գավառը, ինչպես նաև այդ գավառի գյուղաքաղաքներից ամենախոշորը, որը միջին դարերում դեռևս կարևորագույն հանգույց էր Դվին-Պարտավ մայրուղու վրա⁴⁸։ Այժմ էլ Հաթերը պուղից ոչ այնքան հեռու. Տրտու-Թարթառ գետի ափին դեռ մնում են Հաթերը

⁴⁶ З. И. Ямпольский. В. И. Кобычев. Улины, Народы Кавказа, т. II, стр. 195—196.

⁴⁷ Հայ ժողովրդի ծագումն այսպես է բացատրել գերմանացի գիտնական Պ. Կնսենը։ Հայ գիտնականներից ոմանք, ժխտելով Կնսենի տեսակետը, միաժամանակ համաձայն են, որ պետք է ընդունել Բաթա և Բաթա անունների լեզվաբանական նմանությունը, որը ուրանց միջև զոյություն ունեցած անմիջական սցեղակցության հետևանք է հանդիսանում (սեղա ժողովրդի պատմություն, Ե. Ա. 1963, Երևան, էջ 107)։

⁴⁸ Պրոֆ. Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936 թ., էջ 199—200.

դյուղաբաղաբ-կայանի ավերակներն ու բերդապարսպի մնացորդները, որոնք կարոտ են հնաբանական ուսումնասիրություններին:

Լեոն ալն կարծիքն է հայտնել, որ Արցախական աշխարհի 14 գավառներն իրից առնվաղն ութը նախկին ցեղերի անուններն են կրում իրենց վրա. «Վայ-կունիք, Մեծիբանք, Մեծկունք, Հարջլանք, Մուխանք, Պիանք, Պարծկանք, Սիսական... Ունենք Մուխանք գավառ, ունենք և «Մխանց տոհմ», ունենք Պարզկանք գավառ, ունենք և «աշխարհ Պարծկանց»⁴⁹:

Հայագետների կարծիքով՝ Արցախի եկվոր ցեղերից են բաղերը կամ բաղասները: Հին աղբյուրների բաղմակողմանի ուսումնասիրության հիման վրա՝ ահադ. Գր. Ղափանցյանը հաստատել է, որ բաղերը խեթերի հարևաններն են եղել, շարժվել են դեպի արևելք՝ իրենց անունները թողնելով Բաղաց աշխարհ (Կապանի մոտերերը), Բաղաբերդ (դարձյալ այնտեղ), Բաղասական աշխարհ կամ գավառ (Փայտակարան-Կասպիանա) և այլ հատուկ անուններում⁵⁰:

Պետք է կարծել, որ դեպի Փայտակարան շարժվելիս բաղերը եղել են նաև Արցախում և հեռացել են ոչ առանց մնացորդ թողնելու:

Վիճելի է Գր. Ղափանցյանի այն թեզը, ըստ որի՝ բաղերի անունից է սերում նաև «Ղարաբաղը»: Իբրև, այն կազմված է զարա-կարա-ցեղ, ժողովուրդ (հին պարսկերեն) և «բաղ» ցեղանունից: Այդպես են կազմված օրինակ, Փայտակարան—փայտով հարուստ վայրի (տեղի) ժողովուրդ, Դաշտակարան—դաշտի ժողովուրդ, Բալակարան կամ Կարաբաղ բալ կամ բաղ ժողովուրդ (ցեղ)⁵¹:

Սա, իհարկե, կամայական ստուգաբանություն է, որովհետև, ինչպես հայտնի է, թաթար-մոնղոլական արշավանքներից առաջ Արցախը երբեք չի կոչվել Ղարաբաղ: Հետևապես և այդ անունը միայն թաթարական ծագում պետք է ունենա:

«Ղարաբաղը» «Ան ալդի» է բացատրում Մ. Բարխուտարյանը⁵², Սակայն այս «սևի» տեղ ավելի շատ պետք է հասկանալ «թանձրախիտ», «մուգ», ինչպես բացատրում է Կ. Գանր⁵³:

Ի. Շուպենը «Ղարաբաղը» երբայերեն լեզվով է բացատրում և բխեցնում է «խարաբ» (ավեր) բառից, ինչպես նաև Արցախն էլ նույնահունք երբայական բառից է սերել տալիս, որ նշանակում է «հողի մեջ»: Իբրև թե Կասպից ծովի նահանջումից ցամաքել է Մուղանի տափաստանը, ինչպես նաև Արաքսի ու Կուրի միախառնումի վայրը, դրանից էլ՝ «խարաբ՝ ավել»-ը⁵⁴:

Սակայն այս բացատրությունից առաջ նա «Ղարաբաղն» արդեն կապել էր թուրք-սելջուկյան ասպատակությունների հետ, սինդելով, որ առաջին անգամ նրանք այդ անունը տվին Արցախին⁵⁵: Հասկանալի չէ, թե թուրք սելջուկներն ինչու պիտի իրենց լեզուն թողած՝ օգտվեին երբայերենից:

49 Լեոն, Խոջաական կապիտալ, էջ 132: Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 23:

50 Проф. Гр. Капанця, Историко-лингвистическое значение топонимии древней Армении (Երևանի պետ. համալսարանի ֆիլոսոֆական աշխատություններ, հ. 14-րդ, 1940 թ.), էջ 380—381:

51 Проф. Гр. Капанця, Хаяса—колыбель армян, Ереван, 1948, стр. 65—67, 250.

52 Մ. Բարխուտարյան, Արցախ, էջ 2:

53 К. Ган, Опыт объяснения Кавк. географических названий, Тифлис, 1909, стр. 70—71.

54 И. Шопен, Новые заметки..., стр. 490.

55 Անդ, էջ 481:

Արցախ-դարաբաղյան հնությունները, հնավանդ ավերակներն ու զերեզմանաթմբերը յոթ փակի տակ դրված զրբերի պես լուռ են և իրենց մեջ պահում են հազար ու մի գաղտնիք: Ապագայի հնախույզները բաց կանեն ու կթերթին այդ զրբերը, և այն ժամանակ մենք կիմանանք, թե ովքեր են և ղեկ Արցախական աշխարհի նախահայկական ցեղերը և ինչպես են ապրել այս լեռնաստանում:

Հիմա դառնանք այն հարցին, թե Մեծ Հայքի Արցախական աշխարհի հայությունը և՛րբ է կազմավորվել էթնիկորեն, և ո՛րն է նրա բարբառի դարգացումը:

Այստեղ դարձյալ պետք է անդրադառնանք վաղուց արդեն տարածված և համարյա օրենքի ուժ ստացած այն սխալ պատկերացումներին, որոնցով աղվանական ցեղեր են համարվել Արցախի բնիկները, ապա նրանց լեզվի պատմությունը վերագրվել է բուն Աղվանքի բնակիչ ցեղերի համար բնորոշ դարգացում:

Եթե Արցախում բնակվում էին զարգարներ, իսկ զարգարներն էլ աղվանական ցեղ են, ուրեմն, Մեսրոպ Մաշտոցը նրանց համար էր գիր ստեղծել, և նրանք էլ խոսում ու գրում էին զարգարեն-աղվաներեն:

Բանն այն է, որ միևնույն հեղինակավոր գիրքն Արցախի բնակչության հայացումը մեկ ավարտված է համարում IV—V դարերում⁵⁶, մեկ էլ VIII-ի սկզբին⁵⁷:

Դուրս է գալիս, որ արցախցիները մինչև VIII դարի սկիզբը (կամ, ավագույն դեպքում, մինչև IV—V դարերը) հայեր չէին, այլ՝ զարգարներ, ուտիներ:

Վերը մենք սկզբնաղբյուրների վկայություններից եկանք այն եզրակացության, որ զարգարներն ապրել են Կովկասյան լեռնաշղթայի փեշերին: Մեսրոպ Մաշտոցը գիր է ստեղծել այդ զարգարների «կոկորդախոս, կոշտ, խժական ու կուպիտ» լեզվի համար: Ոչ մի տեղեկություն չկա այն մասին, թե այդ լեզուն և նրա համար ստեղծված գիրը դարձել են ընդհանուր Աղվանքի 26 ցեղերի համար, թե այդ ցեղերն առհասարակ երբևէ խոսել են մեկ ընդհանուր լեզվով: Ընդհատ այդպես էլ աղբյուրները լռում են զարգարական լեզվով ստեղծված գրականության, նրանով իբրև թե կատարված կրոնական ծեսերի մասին:

Ընդհակառակը, ստույգ ու կոնկրետ վկայությունների հիման վրա դժվար չէ ապացուցել, որ այդ ցեղերը մինչև X դարը պահում էին իրենց զոյությունը, իրենց լեզուները, նույնիսկ իրենց առանձին-առանձին, իրարից անկախ թափոնությունները:

Մինչդեռ գիտնականները «աղվանական միասնական գրի ու գրական լեզվի»⁵⁸, այդ լեզվով թարգմանված աստվածաբանական զրբերի⁵⁹, ստեղծված

⁵⁶ «Очерки истории СССР III—IX вв.», стр. 304.

⁵⁷ Անդ, էջ 315:

⁵⁸ «Очерки истории СССР III—IX вв.», стр. 326.

⁵⁹ С. В. Юшк о в. К вопросу о границах Кавказской Албании (Ист. записки АН СССР, т. I. 1937 г.), стр. 145, К. В. Тревер. Очерки по истории..., стр. 31.

հարուստ գրականություն⁶⁰ ենթադրյալ փաստերի մասին անհիմն պատմություններ են ստեղծում, հետո էլ զարմանում, որ իրենց հայտարարած այս «փաստերը» չեն համապատասխանում իրականության:

Ոչ մի կերպ չի կարելի համաձայնել այն արտառոտ մտքի հետ, թե «VII դարից հետո Անդրկովկասի երկրներում մոնոֆիզիտների ու դիոֆիզիտների պայքարի ընթացքում առաջինների լեզուն դառնում է հայերենը (զրաբար)»⁶¹:

Ուրեմն, զրաբարը VII դարից հետո է դարձել հայ եկեղեցու լեզուն: Եվ այս դարից, «(VIII դարի սկզբից՝ վերջնականապես) աղվանական եկեղեցին անաշուվ է որպես հայկական եկեղեցու մի մասը, իսկ եկեղեցական արարողության լեզուն անբաժանելիորեն և անվերադարձ դառնում է հին հայերենը: Իրա հետևանքով աղվանական գիրը VII դարից աստիճանաբար դուրս է եկել գործածությունից, և նրա մասին հիշատակություններն անհետ կորչում են»⁶²:

Ո՞ր պատմական աղբյուրներից են քաղված այս հայտարարությունները: Չէ՞ որ ուրիշ պատմություն չկա, քան այն, որ Աղվանք կոչված երկրի քրիստոնեական եկեղեցին իր հիմնադրության օրից հայոց եկեղեցու անբաժան մասն է եղել. մինչև 551 թվականը՝ եպիսկոպոսական իրավունքով, նրանից հետո՝ Աղվանից, Լփնաց և Չորա աշխարհների կաթողիկոսական աթոռով: Աղվանքում երբեք էլ դավանաբանորեն ինքնուրույն եկեղեցի չի կազմվել ու չի եղել⁶³: Ոչ մի տեղ և ոչ ոք չի վկայել, թե զարգարների խնցրեկազույն խոսքը եկեղեցական ծեսերի լեզու է դարձել: Եվ մինչև VII դարը ծիսակատարությունների լեզու աղվաներենի մասին հիշատակություններ չէին սփռված, որ VII դարից հետո անհետ կորչեին:

* * *

Բայց մի՞թե իսկապես Արցախի, նրա բնակչության կազմի և լեզվի մասին պատմական աղբյուրները ոչինչ չեն ասել, որպեսզի պատմաբանները կարդան և պատմական իրողություններին քմահաճ բացատրություններ չտան:

Ցանկության դեպքում աղբյուրներից շատ բան կարելի է քաղել:

Ահա հույն խոշոր աշխարհագետ Ստրաբոնը: Մեծ Հայքի կենտրոնական դավառները թվարկելուց հետո նա գրում է. «Հայաստանի կազմի մեջ են մտնում նաև հետևյալ մարզերը. Փավինան, Կոմիսինան և Օրխիստինան, որը (Օրխիստինան—Ու. Բ.) հանում է մեծաքանակ հեծելազոր»⁶⁴:

Օրխիստինան Արցախն է: Ստրաբոնի վկայության քննությամբ այս եզրակացության է հանգել բանասեր Աս. Մնացականյանը⁶⁵: Օրխիստինան Արցախում է տեղադրված նաև ակադ. Ս. Երեմյանի կազմած մի ատլասում⁶⁶:

⁶⁰ Буннятов, Азербайджан..., стр. 97.

⁶¹ «Очерки истории СССР»..., стр. 328.

⁶² «Очерки»..., стр. 328. Также: К. В. Тревер, Очерки по истории..., стр. 310—339.

⁶³ Ա. շ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 129:

⁶⁴ Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ. XIV, § 4, կամ. Та т ы ш е в, Известия древних писателей..., стр. 155.

⁶⁵ Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրակ. հարցերի շուրջը, 1965, Երևան, էջ 261—262:

⁶⁶ С. Т. Еремян. Атлас к книге «История армянского народа», ч. I, 1952, Ереван, карта «Армения во II—I вв. до н. э.».

Ստրաբոնը, Հայաստանի բնիկ, իսկական գավառների թվարկումով չի բավարարվում, նշում է նաև հայ թագավորներ Արտաշեսի և Ջարեհի ձեռքով հարևաններից նվաճված (ավելի ճիշտ, միավորված) երկրամասերը, ապա դրում. «Այս բոլոր ժողովուրդները հիմա խոսում են մեկ լեզվով»⁶⁷, այսինքն՝ հայերեն:

Արտաշեսի և Ջարեհի ժամանակներից անցել էր շուրջ երկու դար: Հնարավոր է, որ հարևաններից գրավված երկրամասերի այլալեզու ժողովուրդներն էլ խոսելիս լինեին հայերեն: Կամ թերևս՝ միայն այդ երկրամասերի ազնվականությունը, որից և ստեղծվել է միասնական լեզվի վկայությունը: Սակայն, որ բուն Հայաստանի գավառներում, իմա՝ նաև Օրխիստինա-Արցախում, արդեն խոսում էին հայերեն, դրա մեջ կասկածելու ոչ մի հիմք չկա:

Ցավոք, օտար աղբյուրները, Հայաստանի արևելյան ու հյուսիսային սահմանների մասին խոսելուց հետո, հաղորդում են շատ քիչ տեղեկություններ երկրի ներսի, նրա մշակույթի և ժողովրդի նիստ ու կացի մասին: Այդպիսի տեղեկություններ կարող էին հաղորդել միայն տեղացիները: Իսկ հայ գիրը, ինչպես հայտնի է, ստեղծվեց միայն V դարի սկզբին: Եվ հենց առաջին մեր պատմագիրներն էլ իրենց հայրենի երկիրը նկարագրեցին այնպես, որ այսօր արդեն դժվար չէ պատկերացնել նրանց ժամանակի Հայաստանի էթնիկական, բաղադրական ու տնտեսական վիճակը:

Մ. Խորենացին է մեր առաջին մատենագիրը, որ խոսում է հայերեն բարբառների մասին: Արամի քաջագործությունները պատմելիս ասում է՝ նա պրավեց հունական գավառներ, ապա սրանց բնակիչներին կարգադրեց սովորել հայկական լեզուն և խոսել նրանով. «Հրաման տալ բնակչացն աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական»⁶⁸: Խորենացին ասում է «հայկական լեզուներ» («զլեզուս հայկական») և հայկական խօսս (երևի՝ խոսվածքներ), սակայն մասնաճյուղներ չի հաղորդում, որպեսզի պարզ լինի, թե ինչ տարբերություններ կային սրանց միջև:

Խորենացին, սակայն, հաղորդում է մի ուրիշ ավելի կարևոր տեղեկություն, որով, թեպետ և բավականին ուշացումով, հաստատվում է Ստրաբոնի վկայությունը Հայաստանի ամբողջ տերիտորիայում գործածվող մեկ ընդհանուր լեզվի՝ հայերենի տիրապետության մասին: Նա պատմում է, որ հայոց Վաղարշակ թագավորը կուսակալներ է նշանակում «զեզերք հայկական խօսից» (հայոց լեզվի սահմաններով)⁶⁹: Այս պատկերավոր ու գեղեցիկ խոսքը չի կարելի այլ կերպ հասկանալ, քան՝ որ Վաղարշակ թագավորն իր պետության սահմանների մեջ առավ հայկական լեզվի ընդգրկած գավառները, բոլոր այն տերիտորիաները, որոնց բնակիչները խոսում էին հայերեն: Վաղարշակի կուսակալներից մեկը՝ Սիսակ անունով, ինչպես հայտնի է, կարգվեց Արաքսի ու Կուրի միջագետքի վրա, և այս երկիրն էլ նրա աղու (քաղցր, անուշ) վարքի պատշաճով ստացավ Աղուանք անունը⁷⁰: Եվ Սիսակի ժառանգ Առանի անվամբ էր, որ այս երկիրը կոչվեց նաև Առան:

⁶⁷ Ստրաբոն, գիրք XI, գլ. XIV, § 5, Латышев, стр. 155.

⁶⁸ Մ. Խորենացի, Պատմություն հայոց, գիրք Ա. գլ. ԺԴ, Ստ. Մախառյանցի թարգմանել է. «Հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն (1961 թ. հրատարակություն, էջ 109):

⁶⁹ Մ. Խորենացի, գիրք Բ, գլ. Ը (1913, էջ 112):

⁷⁰ Մ. Խորենացի, պատմություն հայոց, 1913, էջ 113.

Մ. Կաղանկատվացին Խորենացուց արտագրելիս աղավաղել է այս պարագան՝ Աղուանքը բացատրելով Առանի աղու բարբոս և ոչ թե Սիսակի (տե՛ս նրա գրքի էջ 14):

խորենացին էլ, դժբախտաբար, մանրամասնություններ չի հաղորդում իր ժամանակի հայոց լեզվի և նրա բարբառների վիճակի մասին:

Այդ մանրամասնությունները, թեպետև հարևանցիորեն, հաղորդում է բերականության Անանուն Մեկնիչը, որը պատմում է, թե հայոց տարբեր դավաններում նույն բառն արտասանում են տարբեր ձևերով, ինչպես, օրինակ՝ բազուկ, պազուկ, փազուկ⁷¹:

Անանուն Մեկնիչն էլ չէր հայտնում, թե ո՛ր գավառն ինչպե՛ս է արտասանում, և առհասարակ ո՛ր գավառներն են, որ շեշտված առանձնահատուկ խոսվածքներ ունեն։ Այդ շատ կարևոր տեղեկությունը պետք է հաղորդեր VII դարի վերջի մեր բազմաշնորհ Ստեփաննոս Սյունեցին, որը «Հայաստանի, Սյունիքի և Արցախի մասին գրում է ոչ թե որպես մի օտար հեղինակ, այլ որպես այդ երկրի հարազատ զավակը, Սյունիքի երկարամյա հոգևոր առաջնորդը, Արցախի դրագևտների թղթակիցը և հայոց լեզվի ու նրա բարբառների բազատեղյակ մասնագետը»⁷²:

Ստեփաննոս Սյունեցին գիտելու հայոց ընդհանուր լեզվի ու նրա գավառային բարբառների և՛ ընդհանրությունը, և՛ տարբերությունները։ Ընդհանուր, կամ իր խոսքով ասած՝ միջերկրային, լեզվի ջատագով լինելով, նա խորհուրդ էր տալիս տիրապետել այդ միջերկրային կամ ոստանիկ լեզվին, գրել միայն նրանով, որովհետև նա է պետքական բանաստեղծության և առհասարակ գրելիք ամեն մի պատմության համար:

«Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեղերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽովթայինն և զՉորրորդ—Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլև աւգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի...»⁷³:

Զի կարելի պահանջել ավելի պարզ ու կոնկրետ տեղեկություն այն մասին, որ եղել է հայկական միջերկրային ու ոստանիկ լեզու (սա աներկրայորեն՝ զրաբար լեզուն է), և եղել են դարձյալ հայերեն, սակայն «բառք եզերականք» կամ բարբառներ, որոնցից է՛ր և Արցախայինը։ Ստեփաննոս Սյունեցու այս վկայությունից չի կարելի շանել մի ուրիշ հետևություն ևս. որ այս եզերական բարբառները (իմա՝ նաև Արցախայինը) հայոց լեզուներ են, հայոց միջերկրային, ոստանիկ լեզվի տարբերակները և ոչ թե հայ ազգի հետ ձուլված յեղերի նախկին լեզուների մնացորդ-վերապրուկներ:

Ստեփաննոս Սյունեցու վկայությունը հենց այսպես էլ հասկացել է մեծանուն հայագետ Հ. Հյուբշմանը. «...ննդիր պետք ենք ընել թե արդյոք այս հիշված լեզուները՝ Կորճայն ևն՝ հայ գավառաբարբառներ էին, թե՞ նույն երկիրներուն հին լեզուներուն մնացորդը: Քանի որ այս ավանդությունը (պետք է հասկանալ՝ վկայությունը—Ու. Բ.) միջերկրեա (լեզվի) և եզերական գավառաբարբառներու մեջ խտիր կը դնե և ոչ թե հայերենի ու օտար լեզվի մեջ, ըստ ինքեան Կորճայ ևն ըսվածով, ըստ այսմ նաև Սյունի ըսվածով՝ հայ գավառաբարբառ հասկընալու է, ինչպես որ հայերը կը հասկընան»⁷⁴:

71 Н. Адонц. Дионисий Фракийский и арм. толкователи, Пгр., 1915, стр. 149

72 Ա. Ս. Մեղակյանյան, Ազգանից աշխարհ..., էջ 45:

73 Н. Адонц, Дионисий..., стр. 187.

74 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 59:

Կարի՛ք կա այլևս այսքան կոնկրետ ու արժանահավատ վկայություններից հետո ապացուցել Արցախին կպցրած «ալբանական» վերադիրի անհեթեթությունը: Արցախն ինչո՞ւ էր ալբանական, եթե Մեծ Հայքի պետության կազմավորման առաջին իսկ շրջանից նրա մեջ էր և նրան էր պատկանում, եթե Ստրաբոնի ժամանակ, երբ Ալբանական շրջանը լեզուներով խոսող 26 տարբեր ցեղերի թագավորները նոր-նոր սկսել էին ենթարկվել մի թագավորի և այն էլ Կուրից հյուսիս, իսկ Արցախը Կուրից հարավ արդեն ոչ միայն Մեծ Հայքի մեջ էր, այլև խոսում էր հայերեն, ընդգրկված էր «հայոց խօսից» անջնջելի բաժանների մեջ:

*
*
*

Այժմ դառնանք այն հարցին, թե ե՛րբ է գոյացել Արցախական բարբառը, լեզվա-պատմական ինչպիսի՝ ճանապարհ է անցել և ի՞նչ դեր է ունեցել Արցախական աշխարհի բնակչության, հետևապես և հայ ժողովրդի ձևակառուցման համար:

Կարելի է սկսել վերջից: Բնակաւնաբար եզերական (այս բառի իսկական իմաստով, այսինքն՝ ծայրագավառային) բարբառներն ամենից շատ են ենթակա օտար ազդեցություններին, մանավանդ, եթե այդ օտարներն այնպիսի բնակալիներ են, ինչպիսիք էին պարսիկներն ու արաբները, սելջուկ-թաթարներն ու մյուս ավարառու հորդաները, որոնք հրով ու սրով էին տարածում իրենց լեզուն, սրա հետ էլ կրոնը, կամ կրոնը՝ նրա հետ և լեզուն:

Այո, եզերական լեզուներն ամենից շատ են ենթակա օտարների հարվածներին ու ազդեցություններին: Այս պատճառով էլ սխալված չենք լինի, եթե եզերական բարբառները համարենք ազգի ընդհանուր լեզվի եզերապահ գնդերը:

Լեոն Արցախ-Ղարաբաղի՝ բնությունից ստացած կոչումն էր ճանաչում Հայկական բարձրավանդակի պաշտպանությունը արևելքի տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ. «Այդ հսկայական բերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային և հարավային ափերով Միջին Ասիայից բերում են Կուր-Արաքսյան արգավանդ տափաստանները: Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները գալիս, ընդհարվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում ու ետ էին դառնում»⁷⁵:

Այս «հսկայական բերդի» աշխարհագրական դիրքն, անկասկած իր անուրանելի դերն է ունեցել: Սակայն չի կարելի մոռանալ նաև դերը պաշտպանական այն անճեղքելի պարսպի, որ կոչվում է ալգային ինքնություն, և որի կրաշաղախը լեզուն է՝ արցախային եզերական բառը: Ինչպե՞ս է առաջացել այն, ե՛րբ, հայերեն ընդհանուր լեզվի ի՞նչ տեսակ հատվածումից:

Այս հարցերը մեջտեղ են գալիս, որովհետև, եթե ճիշտ են այն գիտնականները, որոնց կարծիքով բարբառներն ընդհանուր միասնական լեզվի ազդեցությամբ վերափոխված նախկին ցեղային լեզուների մնացորդներն են, ապա իրավացի են և նրանք, ովքեր բարբառներից շատերի մեջ տեսնում են ընդհանուր միասնական լեզվի ճյուղավորումները: Առաջին դեպքում ընդհանուր

⁷⁵ Լ և ո, Հայոց պատմություն, հ. 9, 1946, էջ 493:

լեզուն մերձեցրել է տարբեր ցեղերի լեզուները: Երկրորդում պատմական հանգամանքները միևնույն լեզվով խոսող զանգվածներին այնպես կտրել ու հեռացրել են իրարից, որ այս զանգվածները լեզվական տեսակետից ձեռք են բերել նոր երանգներ, դարձել նույն լեզվի տարբեր խոսվածքները կամ բարբառները:

Մի դեպքում բարբառը մայր լեզվի կրտսեր եղբայրն է, մյուս դեպքում՝ հարազատ զավակը: Երկրորդ պարագան մեզ թվում է առավել բնորոշ արցախ-ղարաբաղյան բարբառի համար: Ինչ էլ որ լինի, հայոց մայր լեզվի հետ ունեցած նրա կապը չափվում է հարազատության ա՛յս աստիճանով՝ զավակի կամ կրտսեր եղբոր:

Ահա թե ինչու ծիծաղելի են տեր-գրիգորյանները՝ արցախային բարբառի համար հայթայթած իրենց զարգար-թուրթական-հաբեթական օտար ստնտուով հանդերձ:

* *

Նվաճողներն իրենց համար թեւավոր խոսք են ստեղծել՝ սահման քաջացվեն յուրյանց: Իսկ հայ պետականության ամենաբուռն ծաղկման շրջանում նրա վարչական սահմանները տարածվում էին ժողովրդի հայկական խոսից»՝ հայկական լեզվի սահմաններով:

Սակայն հատկապես շորորոգ դարից հետո իրադրությունները թույլ չտվին, որպեսզի հայոց վարչա-քաղաքական և էթնիկական-լեզվական սահմաններն իրար հետ համընկնեն:

Հինգերորդ դարից սկսած Արցախ հայաշխարհը պարբերաբար կտրվում էր մայր երկրից: Սակայն ամեն պարագայի՝ կտրվում էր որպես հայկական գավառ՝ իր ազգային անխաթար միջավայրով:

Հայ թագավորներին ու իշխանաց իշխաններին ժամանակ առ ժամանակ հաջողվում էր վերանվաճել երկրի ծայրագավառները, այդ թվում և Արցախը, որոշ ժամանակ պահել միասնական ու համազգային մի ընտանիքի սահմաններում: Սակայն մեկ էլ գալիս էր հերթական բռնակալը, և Հայաստան աշխարհի բազմատվածությունը դառնում էր անխուսափելի:

Այս պայմաններում իր բաժին ազգային լեզու եզերական բառն անեղծ պահելն Արցախի հայության համար այնքան դժվար էր, որքան և պատվաբեր:

Ի դեպ, կասկածից դուրս է, որ արցախական բարբառն առաջացել է շատ ուղիղի վաղ, քան Արցախի 387 թ. մեկուսացումը: Թե դրանից որքան առաջ՝ այդ մասին թիչ հետո: Բայց որ Արցախը մեկուսացել է որպես հայկական գավառ՝ հայախոս բնակչությամբ ու հայկական միջավայրով, դա ամեն կասկածից դուրս է: Միամտություն կլինի կարծել, թե IV դարի վերջում Մեծ Հայքից կտրվելուց հետո որևէ ոչ հայկական գավառ, նույնիսկ ցանկության դեպքում, հնարավորություն կունենար հայանալու՝ ասիմիլյատոր պարսիկների, արաբների, ապա նրանց հաջորդած ամեն տեսակ խաթամուծի տիրապետության տակ լինելով հանդերձ, Բաթանումից շատ առաջ արդեն գոյացել էր արցախային հայ բարբառը: Եվ հենց հայկական միաձուլվածություն հանգամանքն էլ Սասանյաններին ստիպեց Արցախը միացնել Սյունիքին՝ Սյունյաց իշխանների ղեկավարությամբ⁷⁶: Սրանից հետո էր (V դարի սկզբից), որ Ար-

⁷⁶ «Очерки истории СССР...», стр. 315:

ցախը կոչվում էր նաև Փոքր Սյունիք: Մ. Խորենացին մասքուտների երկրում նահատակված Գրիգորիսի մասին ասում է. սարկավազները նրա դիակը «բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»⁷⁷:

Սակայն այստեղ արդեն կրօնական ու ազգային տեսակետներից Փոքր Սյունիք-Արցախը ծանրագույն վտանգի տակ էր, որովհետև, Ուտիքի հետ միասին, այն տառացիորեն մնացել էր հայ ժողովրդի արևելյան ելրը, ենթակա ասիմիլյատոր բռնակալների շրջմիջվող հարվածներին:

Կորյունի հաղորդած տեղեկություններում կա մի շատ կարևոր հանգամանք: Գրեթե ստեղծելուց և նրանով աշակերտների առաջին խմբերին զրազեստ դարձնելուց հետո, Մաշտոցն այս նորրոժա ուսուցիչներին ուղարկում է Հայաստանի տարբեր գավառները՝ գիր և ուսում տարածելու: «Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն: Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս, ի դաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ»⁷⁸:

Այսպես, ճշմարտության աշակերտներին խումբ-խումբ Հայաստանի գավառներն է ուղարկում: Իսկ Սյունիք ինքն անձամբ է գնում. «Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: Եւ անդ աստուածասէր հնաղանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր վաղենակ անուն: Բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զզաղանամիտ զվայրենագոյն զճիւղաղաբարոյ կողմանցն. և այնչափ փոյթի ի վերայ ունենալով՝ և դայեակաբար սնուցանել և խրատել, մինչև ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել...»⁷⁹:

Նույն տեղեկությունն է հաղորդում և Սյունյաց պատմիչը, թե Մաշտոցը «Եդ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կարգեաց ի վերայ զաշակերտակիցն իւր զԲենիամին: Եւ Փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն դպրութեամբ. և գիտողս աստուածային կտակարանաց»⁸⁰:

Եվ, ինչպես պետք էր սպասել, Սյունյաց աշխարհում (Մեծ և Փոքր Սյունիքներում) դպրություն տարածելուց հետո է, որ Մաշտոցը գնում է վրաց ու Աղվանից կողմերը՝ նույն առաքելությամբ:

Փոքր Սյունիքի (Արցախի) Հաբանդ գավառի Ամարաս գյուղաքաղաքում. ըստ ավանդության, Մեսրոպ Մաշտոցն իր ձեռքով է բացել առաջին հայկական դպրոցը:

Մաշտոցն անձամբ էր եկել այս հայաշխարհը, որպեսզի իր ձեռքով տարածեր հայրենի գիր ու դպրություն: Ո՞րն էր նրա մտահոգությունը: Դիմագրավ կանգնել այս կողմերի հայության վերահաս ուժացմանը: Հայ ժողովրդի ամենալուսավոր զավակն ու մեծագույն երախտավորը լավ էր հասկանում Սյունիքի և հատկապես Արցախի հայապաշտպան դերը: Պատահական չէր, որ առաջին դպրոցներից մեկն էլ հիմնեց Ամարասում՝ Գրիգոր Լուսավորչի կառույցած

77 Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, գիրք Գ, գլ. Գ:

78 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58:

79 Անդ, էջ 60:

80 Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 55—56:

վանքում⁸¹։ Լուսավորիչը ևս արևելյան Հայաստանում իր գործունեությունն այստեղից էր սկսել տեղի հայ բնակչությանը ներգրավելով ազգային ինքնապաշտպանության այն ամուր շրջապարսպի մեջ, որպիսին երկար դարեր պետք է հանդիսանար հայոց ինքնուրույն քրիստոնեական կրոնը։ Կարծես երկու մեծ հայրենասերներն էլ գիտեին, թե ուր կողմից է սպասվում հայության վրա գալիք աղետը։ Եվ երիցս իրավացի է ն. Ակինյանը, երբ գրում է. «Ե գարուն Գուգարք, Արցախ, Ուտի, Փայտակարան և Հոռմեական Հայաստան ազգագրական տեսակետով կը նկատվեին մասեր հայ ժողովուրդի մեծ զանգվածին, շար բախտով միայն դատված անկե... Հայ ըմբռնումով Մեծ Հայաստան գաղափարի սահմաններուն մեջ են անոնք»։

Այս գիտակցությամբ այցելած էր Մաշտոց 415-ին Աղուանից աշխարհ (Հայոց Աղվանք—Ու. Բ.), հաղորդակից ընելու զայն նորաստեղծ հայ գրականության արգասիքներուն⁸²։

Լեոն գրում է. «Շարունակելով իր կրթական-քարոզչական առաքելությունը հյուսիսի վայրենի լեռնաստաններում, Մաշտոցն անցավ Արցախ և Ուտի նահանգները, քարոզեց ու դպրոցներ բաց արավ նաև այդ կողմերում»⁸³։

Այսպիսով, Արցախում հայերեն խոսքն ամրապնդվում և տարածվում է նաև հայերեն գրով։ Եկեղեցիների ու վանքերի կից դպրոցները կրթում են ոչ միայն ազատների ու մեծատունների երեխաներին, այլև աղքատների։ Մ. Կաղանկատվացին պատմում է Արցախական աշխարհում գոյություն ունեցող դպրոցների մասին և ապա վկայում, որ այդ աշխարհի Պարզկան գավառի գյուղերից մեկում ոռձիկով դաս է տալիս մի աբեղա. «Ի դպրոց մտան էր և ուսանէր թոշակաւ»⁸⁴։ Այս տեղեկության համաձայն՝ մինչև աբեղայի հայտնվելն էլ գյուղում դպրոց կար, ուր «թոշակաւ» աշակերտներ էին կրթում։

Եթե գյուղը դպրոց ուներ, այն չէր կարող գործել միայն մեծատունների համար։

Ուրեմն, արցախային բառն իր ազգային ինքնությունը պաշտպանելու համար բոլորանվեր ստացավ նաև ամենահզոր ղեկը՝ հայերեն գիր։ Ստացավ՝ այն երբեք և ո՛չ մի գնով ձեռքից չտալու համար։

* * *

Շատ կարևոր է պարզել մի հարց ևս. թե Արցախային բարբառն ի՞նչ է պահպանել իր նախկին վիճակից և ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել հետագա դարերի ընթացքում։

Բնական է, որ հայոց միջերկրային լեզուն, ինչպես նաև մյուս եզերական բարբառները պիտի ենթարկվեին մեծ փոփոխությունների։ Ժամանակը նոր լեզուներ է ստեղծում և խորտակում է դարերի պատմություն ունեցող հին ու հայտնի լեզուներ։ Այն չէր կարող իր դրոշմը չդնել նաև հայերեն լեզվի արցախային բարբառի վրա։ Ինչպե՞ս և ի՞նչ շահանիշներով պարզենք, թե ո՛րն է

81 Փ. Բ ու Ղ ա ն դ, Հայոց պատմություն, Երևան, 1947, էջ 94։

82 Ն. Ա կ ի ն յ ա ն, Ս. Մաշտոց Վարդապետ, Վիեննա, 1949, էջ 315։ Հետաքրքիր է, որ 387-ի բաժանումից հետո հայոց արևելյան զավառների վիճակն այսպես է գնահատում նաև Հյուրշմանը (տե՛ս նրա «Հին հայոց տեղւոյ անունները», էջ 26—28)։

83 Լ ի ո, Հայոց պատմություն, հ. Ա, էջ 510։

84 Կ ա ղ ա ն կ ա տ ու ա ց ո յ..., էջ 83։

կատարված փոփոխությունը, և ի՛նչ է մնացել անփոփոխ: Կա մի ամենակայուն չափանիշ՝ գրաբարը: Այն մնացել է անփոփոխ: Եվ հայերեն լեզվի կամ նրա որե՛է բարբառի կրած փոփոխությունների ու պահպանած ավանդների չափերը որոշելու համար պետք է այդ լեզուն կամ նրա բարբառը դնել գրաբարի կողքին, համեմատել:

Ակադ. Ար. Ղարիբյանն այս առթիվ ճիշտ նկատել է, որ «Ցեղակիցներից հեռացած և քիչ առիթներով նրանց հետ կապված այս կամ այն հայ ցեղը (պետք է հասկանալ՝ հատվածը — Ու. Բ.) աստիճանաբար իր լեզվի մեջ կմտցրնե՛ր զանազան փոփոխություններ, որոնք հայերեն լեզվին կտային այս կամ այն տարբերիչ գիծը, այս կամ այն տարբերիչ երանգը»: Եվ, սակայն, «Այսպիսի բարբառները շատ ավելի մոտ կլինեին հայերենին, ավելի շատ ժառանգություն կպահեն ընդհանուր լեզվից, քան թե այն բարբառները, որոնք առաջացել են օտարների կողմից հայերենը սովորելու պրոցեսում: Բարբառների հյուղավորման այս ճանապարհն առանձնապես քիչ փոփոխություն կմտցնի արտասանության մեջ, ուստի այս ճանապարհով առաջացած բարբառները հին հայերենի հնչյունական առանձնահատկություններից շատ բան կարող են ավելի հավատարմությամբ պահպանած լինել, քան այն բարբառները, որոնք առաջացրել են օտարները»⁸⁵:

Ասենայն հավանականությամբ գրաբարը գրական լեզու դառնալուց առաջ եղել է կենդանի, խոսակցական լեզու: Նիկ. Մառը գտնում է, որ այն «Վաղ միջնադարում և առավել խոր վաղնջական ժամանակներում հիմնական խոսակցական լեզու» է հանդիսացել⁸⁶ հայ ժողովրդի ամենալայն խավերի համար: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Գրական լեզու դառնալու հենց սկզբնական շրջանում ունեցած նրա բյուրեղային վիճակը մեզ հուշում է բանավոր շրջանառության մի երկար նախընթացք, որը պետք է տեսնել իններ մի քանի հարյուրամյակ: Այդ կատարելագործման ամենաբուռն ու արդյունավետ շրջանը հավանաբար եղել է IV դարը՝ քրիստոնեությանը ծառայելու նրա առաջին հարյուրամյակը:

Հայագետների համոզիչ կարծիքով՝ գրերի ստեղծումից առաջ հայ եկեղեցու ծիսակատարությունների լեզուն եղել է հայերենը: Դժվար է պատկերացնել, թե ազգային եկեղեցի ստեղծելու և պահպանելու մասին այնպես ջանադրաբար հոգացող հայ գործիչները մոռացության տված լինեին այս կարևորագույն խնդիրը:

Հ. Մարկվարտը իրավացի է, երբ ենթադրում է, որ «...Գրիգոր Լուսավորիչը հայերեն է քարոզել... Համենայն դեպս նա բավականաչափ հասկացել է հունարեն, որպեսզի ունկրնդիրների համար բերանացի թարգմաներ ընթերցածները»⁸⁷:

Գրաբարի նախապատրաստումը գրական կատարյալ մի լեզվի համար, որ նախընթացքի վերջին հարյուրամյակն էր ընդգրկում, անկասկած սկսվել է հենց Գրիգոր Լուսավորչի և Տրդատի ժամանակներից: Լուսավորիչն իր քարոզչական անխոնջ ու ծավալուն գործունեության համար չէր կտրող, նախ և առաջ, նկատի չառնել ժողովրդին հասկանալի մի լեզու, տվյալ դեպքում՝ հայերենը:

⁸⁵ Ար. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն, էջ 65:

⁸⁶ Н. Я. Марр, Племенной состав населения Кавказа, ПГР, 1920, стр. 20.

⁸⁷ Յ. Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշագրերու և վարուց ու Մաշտոցի, Վիեննա, 1913, էջ 3—4:

Նրան մեծապես ընդառաջում էր թագավորը, որի հրամանով երկրի գավառներում դպրոցներ էին ստեղծվել, և այս դպրոցներում մանկանց բազմություններ էին կրթվում «հավատարիմ դպրապետների» ձեռքի տակ:

Այսքանը կատարվում էր, ամենից առաջ, Աստվածաշունչ քարոզելու համար: Իսկ անգիր ու անգրագետ ժողովրդին քարոզել, մի բան հասկացնել կարելի էր միայն նրա լեզվով: Պարզ է, որ Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի հիմնած դպրանոցներն առաջին հերթին պետք է պատրաստեին թարգմանիչներ, թարգմանիչ-քարոզիչներ, որոնց լեզուն պետք է լիներ հայերենը: Ուստի «...Թարգմանչաց լեզու, ի գիր առնուելէ դար մը իսկ առաջ (Տրդատի միջոցին) սկսած էր ավետարանական քարոզության մը գործիք լինել, անոնց ձեռքով, որոնց պաշտոնն էր թարգմանել ս. Գիրքը ի լուր ժողովրդեան՝ կենդանի բարբառով, և ատով՝ աներկբայապես՝ հետզհետե պիտի կատարելագործվեր լեզուն, և թարգմանությունը, մանավանդ Աստվածաշունչի հարազատությունը պահելու նախանձախնդրությամբ, ինքնին պետք է հյուրընկալեր նոր բացատրութեանց կամ նոր առումների լեզուն մը լեզվին մեջ»⁸⁸:

Գրիգոր Լուսավորչի և նրա քարոզիչների գործունեությունը խարսխված է եղել բանավոր ու կենդանի հայերեն խոսքի վրա: Նրանց ժամանակ հայոց ընդհանուր (միջերկրյա կամ ոստանիկ) լեզուն, — որ հետո պետք է դառնար ու կոչվեր գրաբար, — հասել էր զարգացման մի այնպիսի մակարդակի, որ իր ազդեցության ոլորտներում էր պահում հայոց բովանդակ աշխարհի բոլոր խոսվածքները, որոնց մեջ էր և Արցախական աշխարհի հայերենը:

Այդ ազդեցության շափն ու ձևերը լրիվ պարզելու համար թերևս անհրաժեշտ լինի բարբառի և գրաբարի համեմատությունը կատարել, առնչակցությունները քննել բազմակողմանիորեն, մի բան, որ մեր նպատակից դուրս է: Այստեղ մենք ուզում ենք պարզել մի հարց. թե արցախ-ղարաբաղյան բարբառի որ առանձնահատկություններն են, որ գալիս են գրաբարի ուժեղ ազդեցության ժամանակից և դրանք ի՞նչ չափով են պահպանվել:

Բավական է ուշադրության առնել Արցախ-ղարաբաղյան բարբառի ձևաբանական մի քանի ակնառու առանձնահատկությունները՝ համոզվելու համար, որ դրանք գալիս են գրաբարից:

Ղարաբաղի բարբառում է, որ պահպանվել է գրաբարի «ն հանգը, որ շատ բառերու ծայրը այնպես սովորական է»⁸⁹, Օրինակ, մեր բոլոր բարբառները գրաբարյան կուռն, դուռն, ձուկն, մուկն, նուռն, կաթն, մատն, ոտն, սառն, գառն, և այլն բառերից չնչել են վերջին ն-ն, իսկ Ղարաբաղի բարբառը պահել է, միայն հնթարկելով իր համար բնորոշ մի փոփոխության. կուռն-կոռնը. դուռն-տոռնը, ձուկն-ձուկնը, մուկն-մոկնը, նուռն-նոռնը, կաթն-կաթնը, մատն-մաննը, ոտն-վրէննը, սառն-սառնը, գառն-կյառնը: Եթե այս օրինաչափության կողքին երբեմն կա նաև օրինախախտություն, ապա դա այն է, որ հաճախ բառավերջի Ը-ն ընկնում է ն-ից առաջ՝ մոկըն (կամ մոկուն), ծուկըն (կամ ծուկուն):

Հայոց նոր աշխարհաբարը և գրեթե բոլոր բարբառներն ընդունել են մի նոր հնչյուն՝ ֆ, որը գրաբարում չկար: Ղարաբաղի բարբառը մինչև օրս էլ չի ընդունել այդ հնչյունը և գրաբարի նման օտարազգի բառերի ֆ-ն դարձնում է

⁸⁸ Ե գ ի շ ե Դ ու Ր ե ա ն, Պատմութիւն Հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 321—322:

⁸⁹ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայ բարբառագիտութիւն, էջ 66:

վի, ինչպես, օրինակ՝ ֆուրգոն-փուրգոն, ֆարրիկա-փարրիկ, կանֆետ-կան-իետ, ֆիգիկա-փիգիկա, Ֆրանսիա-Փրանսիա:

Ձայնավորով սկսվող շատ բառերի առջևից դարաբաղյան բարբառն ավելացնում է մի Հ. հու-ով, հուր-ոյր, որոյ, հօր-ուր, հունց-ոնց, հինչ-ինչ, հիր-երբ, հընգեր-ընկեր, հըլեվուր-ալետր ևն: Հր. Աճառյանն այս երևույթի մեջ տեսնում է զրաբարի վաղ շրջանի մի շատ բնորոշ առանձնահատկության պահպանումը. «Ասոնք հատկապես հետաքրքիր են անով, որ կներկայացնեն հայերենի հնագույն ձևը, այսպես, օրինակի համար՝ ով, ոյր, ուր, ինչ ունեին նախապես սկզբնական k՝ ձայնը, որ հետո ինկավ. Ղարաբաղի Հ ձայնը անոր շարունակությունն ըլլալու է»⁹⁰:

Գրաբարի ո(ով) ձևը պահպանվել է՝ դառնալով «հու», որ բառակապակցությունների մեջ երբեմն դառնում է «հուվ»։ Հո՛ւ եկավ, հո՛ւվ ա եկալ: Այս վ-ն բարեհնչունության համար է. երկու ձայնավորների (ու և ա) արանքն ընկնելով՝ նրանց բաժանում է իրարից:

Ուշագրավ է, որ Ղարաբաղի բարբառում պահպանվել են նաև զրաբարյան մի շարք հոլովաձևեր: Գործիականը համարյա մաքուր զրաբարյան ձևն ունի, ըստ որում զրաբարյան «աւ»-ը հնչում է «աւլ»։ սահմանաւ-զըհմանաւլ, գիշերաւ-քշերաւ...

Գրաբարյան «գ» նախդիրը պահպանվում է մի շարք դեպքերում. զինքըս, զինքըտ, զինքըր: Զինքըտ նըշանց տօ (Ինքդ քեզ ցույց տուր):

Նաև որոշ գերանունների հետ. գէս, գէտ. գէն:

Զէս տար, տիր ուրան տըղը (Այս տար, դիր իր տեղը):

Զէտ յըէր կալ, տէն քըցի (դա վերցրու, գեն զցիր): Զէն հի՛նչ լս ըննա՛կան (Այն ի՛նչ էս անելու):

Սակայն ցուցական այս գերանունների հետ սույն Զ-ն համախ գրվում է նաև ուղղական հոլովի հետ.

(ը) Զէս եկավ, թա՛ (ը)գէն հիշտե՛ղ ա (Սա եկավ, թե՛ նա ի՛նչ տեղ է, ո՛ւտ է):

Թավականին հետաքրքիր նյութ է տալիս նաև բառապաշարը, որ Ղարաբաղի բարբառում մեծ մասամբ պահպանվել է զրաբարյան ձևով, ի հարկե, միաժամանակ ենթարկվելով բարբառի յուրահատուկ օրինաչափություններին: Դժվար չէ այդ նկատել հետևյալ օրինակների վրա.

Գրաբար	Ղարաբաղի բարբառ	Գրական հայերեն
ագի	հաճի	պոչ
այգուց	էքլուց	վաղր
ակոա (կայոփք)	կոռեմ	ատամ
ամանակ	րմանակ	ժամանակ
ամուք	հըմբու(ք)	լուծ քաշող ընկեր
անձաւ	անձավ	քարայր (քարանձավ)
աստէն	աստէն (աստէլ)	այստեղից
արմանալ	արմանալ, ըրմանալ	զարմանալ
աքացի	քացի	ոտքով, քացով

⁹⁰ Անդ, էջ 65.

Գրաբար	Ղարաբաղի բարբառ	Գրական հայերեն
բենն	պենն	բեն
բծիզն	պծեզն	շունի
բոլորակ	պոլուր	շրջանածև (բոլորակ)
զար	կչեփ	շունի
զահ (բարձր տեղի մաստով)	զահհ (զահհամբ)	լի դործածվում
գիշերաւ	քրշերաւ	վաղ առավոտյան
դալար	տիլմը	կանաչ (բույս)
երկայն	էրկան	երկար
երկորեան	ըրկօքան	երկուսն էլ
եւղ	յէղ	յուղ
զօր	զօր	ուժ, դորություն
թաթուլ (կենդանու առջևի փափուկ ծաթը)	թանթուլ	շունի
թափուր	թափուռ	դատարկ (թափուր)
խոնջան	խոնջան	անդրավարտիքի կապ
կոյս (կողմ)	կուս	շունի
կաշկառ (բարերի կույտ)	կաշկառ	շունի
կռշկոռ	քրշկոռ, կըշկոռ	հանգույց

Եվ այլն, և այլն:

Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել: Մենք դիտավորյալ շնչեցինք այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք կապված են կրոնական ծեսերի և առհասարակ եկեղեցու հետ: Այդպիսիք, հասկանալի է, զրաբարից բարբառին են անցել քրիստոնեության տարածումից հետո, անմիջապես կամ էլ հետագա ժամանակներում: Բերված և համանման օրինակները, սակայն, միայն կապված են զրաբարի՝ խոսակցական լեզու եղած շրջանի հետ, քանի որ բարբառն անդրադետ զանգվածների լեզուն է, իսկ նրանք զրաբարի բառերը կարող էին ընդունել միայն և միայն բանավոր ճանապարհով:

Ելևի մասնագետ լեզվաբանները Ղարաբաղի բարբառի մեջ կգտնեն առավել մեծ քանակության զրաբարաբանություններ: Մենք ցանկացանք միայն ցույց տալ, թե ինչպես հին հայերենի ձևերը համարյա իրենց նախնական վիճակներով մնացել են հայ բարբառներից ամենապահպանողականի՝ Արցախ-դարադյան բարբառի մեջ, և թե ինչպես այս փաստն ինքնին վկայում է դեռևս խոսակցական լեզու եղած զրաբարի ուժեղ ազդեցությունը բարբառի վրա:

● Բաղմաշխատ դիտնական Քերովրե Պատկանյանը համոզված պնդում էր, թե Ստեփաննոս Սյունեցու (նրա մոտ՝ Հովհան Երզնկացի) թվարկած բարբառները համարյա անփոփոխ գոյություն են ունեցել նաև V դարից առաջ՝ որպես հայկական էթնոսի զոյացմանը մասնակցած ցեղերի լեզուների փոփոխված ու մշակված մնացորդներ⁹¹:

⁹¹ К. П а т к а н о в. Исследования о диалектах..., стр. 9—10.

Դժվար է ասել, թե երբվանից արդեն հայերեն էր Արցախի բնակչության լեզուն: Բայց որ կենդանի դրաբարի կողքին այն արդեն հայերեն էր, դա աներկբայելի է, քանի որ վերը ցույց տված փոխանցումները միայն այ՛դ շրջանի արդյունք են:

Մի ուրիշ հանգամանք ևս, որ վկայում է քրիստոնեության մուտքի ժամանակից և առհասարակ գրավոր հայերենից առավել վաղ շրջանում գոյություն ունեցած արցախական հայերենի մասին:

Դեռևս V դարի առաջին կեսի մեր մատենագիրների գործերում Արցախը մեծ մասամբ ներկայացված է որպես պաշտպանական ուժեղ կենտրոն: Եղիշեն պատմում է, որ Վարդանանց պատերազմի ողբերգական ավարտից հետո հայ ազնվականությունը և հատկապես կանայք փափկասունք պաշտպանվում էին Արցախում⁹²:

Իզուր չէ, որ Արցախական աշխարհը կոչվել է Արցախամուր՝ բազմաթիվ ամրոցներ ու բերդեր ունեցող գավառ: Ուրեմն, այս բերդերը դեռ կային V դարից առաջ և ունեին իրենց անունները, որոնք հիշատակվում են պատմագիրների գործերում և հատկապես Մ. Կաղանկատվացու մոտ: Ահա այդ անունները. Բերդաձոր կամ Բերձոր, Բերդաքար, Բերդատեղի, Զարաբերդ—Ջրաբերդ, Խոխանաբերդ, Խաչենո բերդ, Հանդաբերդ, Հավախաղացի բերդ ևն: Արցախի գավառանունները՝ Մեծ-Կողմանք, Մեծ-Իրանք, Մուխանք, Պարզկանք, Մեծ-կվանք, Նույնիսկ Ամարաս-Ամարազ-Ամարան-Ամարենք, ինչպես նաև Արձախը⁹³:

Սրանք բոլորն էլ հայերեն բառեր են, որովհետև միայն հայեր հայերեն պկոչեռ իր երկրի տեղանունները: Եվ «Անհրաժեշտ էլ չէ, որ բացատրվի այս տեղանունների... հայկական ծագումը, որովհետև սրանք ոչ մի այլ լեզվով չեն կարող բացատրվել, եթե զանց առնվի հայերենը»⁹⁴:

Վերը մենք դարձյալ խուսափեցինք այնպիսի անուններից, որոնք որևէ առնչություն ունեն ետքրիստոնեական ժամանակների հետ՝ վանքեր ու սրբավայրեր, վանականների ու նույնիսկ իշխանների անուններ և այլն: Մենք միայն նշեցինք այնպիսի անուններ, որոնք կապված են վաղ դարերի հետ և իրենց մեջ ներկայացնում են հայկական կյանքի, Արցախի բնակչության շեշտված հայ միջավայրի տիրապետությունը: Իսկ սա պատահական մի երևույթ չէր, այլ դարերով ստեղծված ազգային նկարագիր, որ իրենով լցրել էր Արցախական աշխարհը, նրա ողջ պատմությունը՝ առաջին իսկ պատմական հիշատակությունից սկսած:

Արցախային բառն ապրեց, գիմացավ դարերի բերած բոլոր արհավիրքներին, եղավ մայրենի հայերեն խոսքի արևելյան աննահանջ ու անկոտրուն Լզերապահը, որովհետև ծնվել էր հայրենի հողի վրա և անվերջ նորանում ու հզորանում էր այս լեռնաշխարհում աչք բացող յուրաքանչյուր մանկան շուրթերին, քանդակվում բերդերի ու վանքերի որձաքարե որմերի վրա, իսկ ամենից առաջ՝ սրի դաստակի վրա արցախցի այն քաջ հայորդու, որը պարտություն չգիտեր⁹⁵,

⁹² Եղիշեի վասն..., էջ 125, 127.

⁹³ Առաջին մատենագիրների մոտ մեծ մասամբ «Արցախը» ներկայացված է «Արձախ» ձևով:

⁹⁴ Ա. Մ. Մանգականյան, Աղվանից գրականության..., էջ 46:

⁹⁵ Արցախական աշխարհի մեծ իշխան Հասան Զալալի սրի նեֆրիտե դաստակը՝ «Հասան Զալալ իշխան Խաչենոյ» նախագրով, պահվում էր Կովկասի թանգարանում (Խիֆիս): Այդ մա-

Այս է հայոց խոսից արցախային բառի պատմական դժվար ճակատագիրը: Եվ եթե այդ բառ-բարրան անձնավորվեր, ապա ամենայն իրավամբ կարող էր ստորագրել այն մեծ ու քաջ, իմաստուն ու հեռատես արցախցու ինքնագրի տակ, որ կնքված է Գանձասարի հրաշակերտ վանքի ճակատին. ես «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի...»⁹⁶:

Б. УЛУБАБЯН

О СЕВЕРО-ВОСТОЧНОМ ОКРАИННОМ ДИАЛЕКТЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА И СМЕЖНЫХ ВОПРОСАХ

Р е з ю м е

Настоящая статья является попыткой, на основе исторических фактов, а также конкретных данных арцахско-карабахского наречия, проследить пути возникновения и развития этого наречия, как северо-восточного окраинного говора (*հղերական բառի*) армянского языка.

Арцахско-карабахское наречие самое распространенное из более чем 40 наречий армянского языка. На нем говорит почти четвертая часть армян мира—все армянское население нынешней Нагорно-Карабахской автономной области, Зангезура, армяне, живущие в Баку, Кировабаде и других районах Азерб. ССР, в Средней Азии, на Северном Кавказе, в Шамшадинском, Иджеванском, Дилижанском и Кафанском районах Армянской ССР. По свидетельству крупного лингвиста Гр. Ачаряна, своего арцахско-карабахского наречия не забыли армяне Тавриза и других населенных пунктов Ирана—остатки армянского населения бывшей Пайтакаранской области. Такое широкое распространение свидетельствует о том, что арцахско-карабахское наречие было живым разговорным языком северо-восточных областей Великой Армении, той части ее, которая в историографии называлась Армянской восточной стороной, Агванской стороной Армении и т. д., и в древние времена, как и в средних веках представляла в этническом, культурном и административном отношении компактную армянскую территорию.

В статье с помощью источников и анализа древней топонимики подробно рассказывается о доармянских племенах Арцаха—десятой провинции Великой Армении. Доказывается, что несостоятельна и необоснованна распространенная в последнее время в исторической науке теория о том, якобы Арцах был населен албанами, а именно—такими албанскими племенами, как удины и гаргарейцы или гаргары.

Как известно, все греческие, римские и армянские источники южной границей Албании считают Куру, а Утик простирался ниже Куры, и всегда, по данным этих же источников, являлся частью Великой Арме-

սին տե՛ս՝ Ի. Ա. Օրբելու աշխատությունը՝ «Нефритовая кинжальная рукоять с армянской надписью» (И. А. Орбелл, Избранные труды, Ереван, 1963, стр. 135—145):

⁹⁶ Գանձասարի վանքի առաջին որմնագրից:

нии. В Утике жили утийцы-армяне, а не уды или удины, которые обитали на южных и северных предгорьях Кавказского хребта. И вполне прав кавказовед С. В. Юшков, утверждавший, что «утиев ни один из греко-римских географов не смешивал с удинами или удами, которые всеми греко-римскими географами признавались как скифские племена»¹. Что касается тех нескольких сотен удинов, которые живут в настоящее время в селениях Нидж, Вардашен, Мирзабекли Азерб. ССР, Октомбери Груз. ССР и говорят «на одном из лезгинских языков»², то только специальное исследование может выяснить, являются ли они остатками скифских удов—удинов или армянских утийцев.

Историчи, которые, вопреки сведениям источников, гаргаров или гаргарейнев признают как жителей Арцаха (следовательно и нынешней НКАО), ничем не доказывают свое утверждение. Начало такой бездоказательной точки зрения положил Макар Бархутарянц, который на основе одного приблизительного созвучия названий племени гаргар и реки Каркар (протекающей по Арцаху) стал «утверждать», якобы гаргары-гаргарейцы жили в Арцахе, отчего и река называлась Гаргар, Муганская степь—Гаргарейским полем, даже Арцах-Гаргаром³.

В настоящей статье приводятся сведения греко-римских и армянских источников, подтверждающие, что гаргары жили только в предгорьях Кавказского хребта, выше албанцев, в соседстве с амазонками, и никогда не спускались ниже Куры. Доказывается также, что Гаргарейское поле находилось на левом берегу Куры, и Арцах никогда не назывался Гаргаром. Вообще не было провинции с названием Гаргар. В списках Агафангела название страны Гугарк было искаженно написано Гаргарк (вместо «Гугарацоц бдешх»—«Гаргарацоц бдешх»), из чего и М. Бархутарянц сделал вывод, что Агафангел имел в виду арцахского князя, хотя известно, что владельцы Арцаха никогда бдешхами не назывались и не могли называться. А река Каркар ни в источниках и ни на языке старых и новых арцахцев никогда не называлась Гаргар, ибо ее название—«Каркар», что означает «каменистый». Так она называлась в источниках, и так это название объясняется в армянской лингвистике, словарях, в книгах известного армениста Г. Хюбшмана⁴, крупного кавказоведа К. Гана⁵ и др.

В «Географии» Страбона Арцах (з I в до н. э.)—одна из собственно армянских провинций, говорящих на едином, т. е. на армянском языке. Начиная с V в. (М. Хоренаци) в армянских источниках появляются конкретные сведения о диалектах армянского языка. А в конце VII в.

¹ С. В. Юшков, К вопросу о границах древней Албании, «Исторические Записки АН СССР», № 1, Москва, 1937, стр. 143.

² Г. А. Климов, К состоянию дешифровки Агванской (Кавказско-Албанской) письменности, «Вопросы языкознания» АН СССР, № 3, Москва, 1967, стр. 69.

³ Ս. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանիդ, 1902, Վաղարշապատ, էջ 11—30, նրա Արցախ, Բաղու, 1895, էջ 2.

⁴ Հ. Հյուբշման, Հին հայոց տեղւոյն անունները, էջ 362.

⁵ К. Ган, Опыт объяснения Кавказских географических названий, Тифлис, 1909, стр. 36.

знаменитый историограф и философ, поэт и лингвист Стефанос Сюнеци, наряду с армянским языком, распространенным в центральных областях Армении (*ստանդիկ լեզու*), перечисляет и его окраинные наречия, среди которых—арцахское (*արցախի լեզու*).

В статье, с помощью сравнения фонетических и морфологических особенностей, устанавливаются общности арцахского наречия и древне-армянского языка—прабара, причем такие, которые утеряны в современном литературном армянском языке и других его наречиях. Понятно, что общности эти—результат влияния живого разговорного грабара («грабар»—книжный язык), каким он был с образования армянского этноса до IV—V вв. В пользу того, что язык арцахцев был армянским еще при разговорном грабаре, говорят также приведенные в статье древние географические и другие названия Арцахского края, которые были только на армянском языке.

После всего этого очевидна абсурдность тех голословных «утверждений», по которым арцахские армяне «являются» бывшими албанами, якобы арменизированными, по заявлению одних—в IV в., других—в VIII в., третьих—начиная с XII в. и, что довольно-таки смехотворно, при содействии арабских завоевателей. Как-будто арабы для того и завоевали Закавказье, чтобы своей военной силой заставить албанцев арменизироваться.

Арцах, начиная с первых упоминаний о нем в истории, являлся частью Великой Армении, со своей этнически армянской средой и языком. Арцахско-карабахские армяне в течение веков героически сохраняли родное наречие на своей древней земле, как самый важный фактор национальной самостоятельности. Но и это наречие, в свою очередь, всегда служило опорой и мощным оружием в борьбе за национальную самостоятельность, против разного рода завоевателей и ассимиляторов.

1870

1. The first part of the report is devoted to a general description of the country, its position, its extent, its population, its climate, its soil, its vegetation, its animals, and its minerals.

2. The second part is devoted to a description of the principal cities, towns, and villages, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

3. The third part is devoted to a description of the principal rivers, lakes, and seas, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

4. The fourth part is devoted to a description of the principal mountains, hills, and valleys, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

5. The fifth part is devoted to a description of the principal forests, parks, and gardens, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

6. The sixth part is devoted to a description of the principal mines, quarries, and other mineral resources, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

7. The seventh part is devoted to a description of the principal industries, manufactures, and commerce, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

8. The eighth part is devoted to a description of the principal educational institutions, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

9. The ninth part is devoted to a description of the principal religious institutions, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

10. The tenth part is devoted to a description of the principal public buildings, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

11. The eleventh part is devoted to a description of the principal public works, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

12. The twelfth part is devoted to a description of the principal public institutions, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

13. The thirteenth part is devoted to a description of the principal public services, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

14. The fourteenth part is devoted to a description of the principal public utilities, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

15. The fifteenth part is devoted to a description of the principal public works, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

16. The sixteenth part is devoted to a description of the principal public institutions, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

17. The seventeenth part is devoted to a description of the principal public services, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

18. The eighteenth part is devoted to a description of the principal public utilities, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

19. The nineteenth part is devoted to a description of the principal public works, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.

20. The twentieth part is devoted to a description of the principal public institutions, their position, their extent, their population, their climate, their soil, their vegetation, their animals, and their minerals.